Azg
Azg
ԱԶԳ

Մայիս 11 Երեքշաբթի 1993

ՈՒՍՈՒՄՆԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹ
9 տարի, թիւ 87 (338)
գինը՝ 10 ռ.
դասիչ 69149
Երեւան 375010
Գանձակեցու 47
հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPRI SU

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ Մ. Մատենադարան ... 2002-Աթ.

Լուր

Երեւանյան հանդիպումը դարձյալ տեղափոխվեց Մոսկվա՞

Մոսկվայում գործող միջազգային լրատվական միջոցներից մեկի աղխատակիցը մեր թղթակցին տեղեկացրեց, թե Մինսկում գործող ԱՊՀ աղխատանքային խմբի մամուլի կենտրոնից հայտնել են, որ մայիսի 14-ին Մոսկվայում կանցկացվի ԱՊՀ երկրների ղեկավարների արտահերթ հանդիպում: Ըստ էության, Մինսկի հանդիպման ժամանակ որոշված ժամկետները ղահղանվեցին, սակայն անցկացման վայրը՝ Երեւանը, առայժմ շրջանցվում է: Հայտնի է միայն, որ դեռեւս անփոփոխ է մնացել մայիսի 26-ին Երեւանում անցկացվելիք ԱՊՀ վարչաղետների հանդիպման նախնական ղայմանավորվածությունը: «Ազգ»

Կարգախոս

Հայաստանը չի մերժել եռակողմ միջնորդությունը

Այսղիսի հայտարարությամբ հանդես եկավ ՀՀ նախագահի բանբերը երեկ կայացած մամուլի ասուլիսում: Անդրադառնալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած 822-րդ բանաձեւին, նա հիշեցրեց, որ ի թիվս այլ կետերի, այդ փաստաթղթում նշվում էր, թե ղետք է վերջ տրվի բոլոր տեսակի բռնական գործողություններին, որոնցից նաեւ մի քանի տարի շարունակվող Հայաստանի շրջափակումը: Մյուս կարեւորը կետը կռվի դադարեցման կոչն է, որին Ղարաբաղն ու Հայաստանը տվել են դրական ղատասխան, իսկ Ադրբեջանը՝ բացասական: Այնուհետեւ ղարաբաղյան հակամարտության կարգավորումը բանաձեւում ներկայացվում է որղես ամբողջական համակարգ եւ Քելբաջարից զորքերի դուրսբերումը դիտվում է հենց այդ համակարգում: Մամուլի քարտուղարի կարծիքով, դա բույլ է տալիս շարունակելու բանակցությունները ու խորհրդակցությունները ԵԱՀԽ շրջանակներում: ՄԱԿ-ի փաստաթուղթը նաեւ որոշակի ղարտավորություններ է դնում Հայաստանի, Ադրբեջանի եւ Ղարաբաղի վրա: Նախագահի բանբերը կտրականապես մերժեց օտարերկրյա եւ տեղական մամուլի ղնդումը, թե ՄԱԿ-ի 822-րդ բանաձեւը Հայաստանի դիվանագիտական անհաջողությունն է:

Փակ եռակողմ միջնորդությանը, որը բանբերի կարծիքով դիտվում է որղես հերթական դիվանագիտական խայլ, Հայաստանը վերաբերվում է դրականորեն, բայց միայն այն կետերում, որոնք առնչվում են Հայաստան-Ադրբեջան սահմանին:

Միաժամանակ այդ փաստաթուղթը ղահանջում էր ղարզաբանումներ, լրացումներ, որոնց միջոցով կողմերն ընդհանուր եզրեր են փնտրում: Նա հերքեց այն ղնդումը, թե Հայաստանը մերժել է եռակողմ միջնորդությունը: Նրա ասելով, չի կարելի ղնդել նաեւ, թե Լեռնային Ղարաբաղը նույնպես բացասական ղատասխան է տվել դրան:

«Լեռնային Ղարաբաղի իշխանությունները ղատասխանատվություն են կրում իրենց բնակչության անվտանգության համար եւ կարելի է նրանց հանկանալ, երբ ուզում են հատուկ միջազգային մեխանիզմներ այդ անվտանգությունն ապահովելու համար», ասաց բանբերը: Շարունակվում է բանակցությունների ընթացքը, եւ Աբրահամյանի ասելով, ըստ երեւույթին Թուրքիան, Ռուսաստանը եւ ԱՄՆ-ը նորից կհավաքվեն, կքննարկեն բոլոր առաջարկները եւ կներկայացնեն փաստաղթերի լրացված եւ ավելի հավասարակշռված տարբերակ: Հնարավոր է, որ այս օրերին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում կրկին քննարկվի Ղարաբաղի հարցը:

Ա. Հ.

Ճակատ

ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՆԴՈՐԸ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Է

Երեկ եւ նախորդ գիշեր խաղաղությունը Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատներում համեմատաբար հանգիստ է եղել: Առանձին դիրքային փոխհրաձգություններ են արձանագրվել միայն Մարտունու եւ Հադրութի ռազմաճակատներում: Այս մասին Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ, վկայակոչելով ինքնապաշտպանության կոմիտեից ստացված տեղեկությունները: Չնայած Ղուբալիի շրջանում շարունակվող ադրբեջանական բանակի մեծ կուտակումներին, երեկ եւ նախորդ գիշեր խաղաղությունը հանգիստ է եղել նաեւ Լաչինի մարդասիրական միջանցքի հարավային մասերում: Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհը գործում է անխափան: Ըստ նույն աղբյուրների, ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի զինվորական հրամանատարությունն այն կարծիքին է, որ վերջին օրերին նկատվող հարաբերական հանգիստը Ադրբեջանն օգտագործում է ուժերի վերադասավորման եւ նոր, ժամանակակից տեխնիկայի տեղափոխման համար:

Երեկ եւ նախորդ գիշեր խաղաղությունը հանգիստ է եղել նաեւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում: Ավելի վաղ՝ մայիսի 9-ի երեկոյան Ադրբեջանի Ղազախի շրջանի տարածից գնդակոծվել եւ հրետակոծվել են Իջեւանի շրջանի սահմանամերձ Կիրանց եւ Բերքաբեր գյուղերի ղաշտանական դիրքերը: Նույն երեկոյան Նախիջեւանի տարածից հրետակոծվել են նաեւ Եղեգնաձորի շրջանի Խաչիկ եւ Արենի գյուղերը: Բոլոր դեղքերում հայկական ուժերը ստիղված են եղել ղատասխան կրակ բացել:

Իրենց հերթին ադրբեջանական աղբյուրները հաղորդում են, թե երեկ եւ նախորդ գիշեր Լեռնային Ղարաբաղի տարածից հրետակոծվել են Աղդամ եւ Ֆիզուլի շրջկենտրոնները, իսկ Հայաստանի տարածից՝ Թովուզի, Ղազախի, Ղուբալիի եւ Զանգելանի շրջանները, ինչպես նաեւ Նախիջեւանի տարածքը: Տուժածների եւ ավերածությունների մասին տեղեկություններ չեն հաղորդվում: «Ազգ»

Բանակներ

ԱՄՆ-ի զայրույթը եւ Եվրողայի զգուշավորությունը

«Վենս-Օուենի ծրագրին հավանություն տալուց բոսնիացի սերբերի խորհրդարանի հրաժարումը զայրույթ է առաջացրել ԱՄՆ-ում: Սակայն ԱՄՆ վարչակազմի ցասումն ուղղված է ոչ այնքան սերբերի, որքան եվրողացի դաշնակիցների դեմ, որոնք շարունակում են զգուշավոր դիրք բռնել Բոսնիայում ու Հերցեգովինայում ուժի գործադրման հարցի առնչությամբ, գրում է անգլիական «Թայմզը»: ԱՄՆ ղեքարտուղարը վերադարձել է Արեւմտյան Եվրողայի երկրներում իր շրջագայությունից, որը ձեռնարկվել էր առեւտրի արգելքը վերացնելու եւ օդային ռմբահարվածներ սկսելու հարցի առթիվ նրանց կառավարությունների դիրքորոշումը ղարզելու նղատակով: Նա ասացավ միայն Թուրքիայի, Իտալիայի եւ մասամբ էլ Գերմանիայի ղաշտպանությունը: Մինչդեռ Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան դարձյալ հավանություն չեն տալիս արգելքի վերացման գաղափարին»: Ընդսմին, ինչպես նշում է «Դեյլի թելեգրաֆը», «նախագահ Բ. Քլինթոնը հայտարարեց, որ ԱՄՆ-ի եւ իր եվրողացի դաշնակիցների միջեւ առկա է ավելի շատ հանձայնություն, քան տարաձայնություն, եւ որ ինքը մտադիր է կոնգրեսին խնդրել ղաշտանելու Բոսնիայում իր գործողությունների ծրագիրը: Սակայն, ինչպես ցույց է տալիս ԱՄՆ հանրային կարծիքի հարցումը, ամերիկացիների միայն մեկ երրորդն է ղաշտպանում Բոսնիային օդային հարվածներ հասցնելու գաղափարը, մինչդեռ 55 տոկոսը գտնում է, որ ԱՄՆ-ը չպետք է մասնակցի ռազմական գործողություններին»:

Ֆրանսիական «Կրուան» բոսնիական թեմայով իր մեկնաբանության մեջ նշում է, որ «ԱՄՆ նախագահ Բ. Քլինթոնը կարող է ստիղված լինել բույլատրելու ռմբակոծումներ, դրա համար ստանալով ՄԱԿ-ի բույլտվությունը եւ սղառելով դիվանագիտական բոլոր հնարավորությունները: Ակնհայտ է, որ Սղիտակ տունը ձգտում է հնարավորին չափ շուտ ազատվել բոսնիական խնդրից, որը խանգարում է զբաղվել գլխավոր հարցով՝ ԱՄՆ-ի տնտեսության զարգացման խթանմամբ»:

Թերթն այնուհետեւ գրում է, որ «Սերբիայի ամենահետեւողական ղաշտպանները՝ ռուսները, դատելով ըստ ամենայնի, համակերղվել են Սերբիայի դեմ ուղղված ռազմական միջամտության մտքին: Ռուս դիվանագետները չեն բաքցնում իրենց հիասթափությունը դեղքերի նոր շրջադարձի առնչությամբ»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ ՏԱՍՍ

Սերբիան բոսնիացի սերբերի դեմ

Տանջալ գործակալության հաղորդման համաձայն, Սերբիայի իշխանությունները արգելել են բոսնիացի սերբերի դեկտարների նախագահի, փոխնախագահների, նախարարների եւ Բոսնիայի ու Հերցեգովինայի սերբական հանրապետության ինքնակոչ խորհրդարանի անդամների մուտքը Սերբիա: Փոխնախագահ Վ. Պլավսիչին Հարավսլավիայի ռազմիկանությունը կանգնեցրել է սահմանում եւ հանձնել Հարավսլավիայի միութենական հանրապետությունից հեռանալու համաղատասխան կարգադրություն:

Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, Բոսնիայի ու Հերցեգովինայի նախագահ Ա. Իզեթբեգովիչը լրագրողներին հայտարարեց, որ իր երկրում հաղթահարելու ղատերազմի միակ այլընտրանքը Վենս-Օուենի հատատության ծրագրի իրականացումն է:

Մեծ Բրիտանիայի ղաշտպանության նախարար Մ. Ռիֆքինդը հանդես է եկել բոսնիացի մուսուլմանների զենքի մատակարարման միջազգային արգելքի վերացման դեմ, որը, նրա խոսքերով, կհանգեցնի «նոր դժոխքի ստեղծմանը»: Հենց որ նրանց հանձնվի ժամանակակից սղառազինություններ մեծ քանակություն, նշել է նա BBC հեռուստաընկերությանը տված հարցազրույցում, անհնար կղառնա դրա օգտագործման վերահսկումը: Միեւնույն ժամանակ նախարարը չի բացառել բոսնիացի սերբերի դիրքերին ընտրվի ռմբահարվածներ հասցնելու հնարավորությունը:

Նախկին Հարավսլավիային նվիրված միջազգային խորհրդաժողովի համակարգիչ կոմիտեի հանձնախմբի Օուենը ITN հեռուստաընկերությանը տված հարցազրույցում հայտարարեց. «Սերբիայի կողմից հատատության ծրագրի ղաշտպանությունը հանգեցրել է բոսնիացի սերբերի վրա ճնշման ուժեղացմանը, որովհետեւ դրա հետեւանքով կիանգեն այն եզրակացության, որ իրենք ղետք է ընդունեն հատատության ծրագիրը: Բոսնիացի սերբերն արդեն սկսել են հասկանալ, որ ներկա ծրագրի այլընտրանքը ռազմական գործողությունների շարունակումն է»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՐ-ՏԱՍՍ

Լեհաստան

Բոսնիայում կռիվը շարունակվում է իսլամների եւ խորվաթների միջեւ

Մինչ ՄԱԿ-ի միջամտությամբ ձեռք բերված հրադադարն ընդհանուր առմամբ շարունակվում էր իսլամ-սերբ ճակատներում, այլ ճակատներում անօրինակ սասկությամբ վերսկսվեցին բախումները, այս անգամ իսլամների ու խորվաթների միջեւ: Ականատես լրագրողների վկայությամբ, շաբաթ, կիրակի եւ երկուշաբթի օրը բնակարան առ բնակարան կռիվներ են տեղի ունեցել հատկապես Մոստար քաղաքում, որտեղ ապրում է մոտ 50 հազար մարդ, մեծամասամբ մահմեդական: Ըստ որոշ տվյալների, քաղաքի մի մասն արդեն հրդեհված է, եւ խորվաթները ճնշում են գործադրում այն գրավելու համար: Եվրահամայնքի ներկայացուցիչ Լորդ Օուենի կարծիքով, խորվաթները ձգտում են էթնիկական զտման ենթարկել շրջանը Վենս-Օուեն ծրագրի ղարտադրված գործադրումից առաջ: Նույն ծրագիրը, որ նախատեսում է Բոսնիա-Հերցեգովինայում էթնիկական հատկանիշներով ստեղծել 10 կիսաինքնավարություն, այս շաբաթ հանրաքվեի է դրվելու Բոսնիայի սերբերի մեջ, իրենց խորհրդարանի մերժումից հետո: Ճեռնարկ Մ. Նահանգների կառավարությունն ընդամենը ժամանակի կորուստ է համարում այդ հանրաքվեն, որի կայացումը ներկա ղայմաններում խիստ խնդրական է, սակայն Կանադան եւ Ռուսաստանը Մ. Նահանգներից խնդրել են առժամանակ հետաձգել սերբերի դեմ զինուժի կիրառման ծրագրերը, տեսնելու համար հանրաքվեի արդյունքները: Երեկ ուշ երեկոյան հաղորդվեց, թե խորվաթ-իսլամ ճակատների վրա հրադադար է հաստատվել:

Պաղեստինցիները դժգոհ բանակցություններից

Վաշինգտոնում երեկ վերսկսվեց արաբ-իսրայելական բանակցությունների ներկա փուլի 3-րդ շաբաթը: Պաղեստինյան ղատվիրակությունն այս անգամ ներկայացավ կրճատված թվով, որպես բողոքի արտահայտություն «բանակցություններում անզգալի առաջադիմության եւ արտախվածների Իսրայել վերադարձնելու մասին ամերիկացիների խոստման չկատարման» հանդեպ: Թունիսում ղաղեստինյան ղատվիրակության ղեսը հայտարարեց, թե Իսրայելի կողմից Գազայում եւ Այրհորդանանում ապրող ղաղեստինցիներին առաջարկված սահմանափակ ինքնավարությունը թեեւ «մի քարք լավ կետեր է ղարունակում, սակայն խիստ անբավարար է մեր կողմից ընդունվելու համար»:

Վարչապետ Մեյջորը վերանայելու է կաբինետի կազմը

Անցյալ հինգշաբթի օրը տեղական եւ խորհրդարանի մասնակի ընտրություններում Պահպանողական կուսակցության ծանր ղարտությունից հետո վարչապետ Ջոն Մեյջորն ստիղված կլինի վերանայել իր գլխավորած կաբինետի կազմը: Թեեւ ընտրությունների արդյունքն անմիջականորեն չի տղառնում կառավարության ճակատագրին, սակայն խորհրդարանի ստորին ղալատում քորիների մեծամասնությունը հստակորեն կրճատվել է: ■

digitised by A.R.A.R.@

Երևան

ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ՀԵՐՔՈՒՄ Է

Մայիսի 7-ին Իրանի Իսլամական Հանրապետության մամուլի բաժինը հայտարարագիր է հրապարակել, որում խստորեն հերքում է Իրանի տարածով մարտնչող կողմերին զենք ուղարկելու բոլոր տեսակի ասեկոսները եւ դա համարում այն սատանայական (խորամանկ) քաղաքականության մի մասը, որը մշակվում է Իրանի Իսլամական Հանրապետության եւ իր հարեւանների մեջ պառակտում առաջացնելու նպատակով: Հայտարարության մեջ մասնավորապես ասվում է. «Ազգերի եւ երկրների հետ բարեկամության հաղորդակցությունը Իրանի արտաքին քաղաքականության ուղղվածությունն է եղել: Նա մշտապես հայտարարել է, որ երկու կողմերի հակամարտությունները եւ տարաձայնությունները պետք է լուծվեն բանակցությունների միջոցով, ոչ թե պատերազմի մեքենայով: Հայաստանի ժողովուրդը լավ գիտե, թե մինչ այժմ ինչպիսի իրադարձություններ են ներգործել պատերազմի ընդլայնմանը: Հայ ժողովրդի պատմական հուշերում արձանագրվել են այն ուժերը, որոնք խաղաղության ու բարեկամության իսկական բարեկամներն ու բշնամիներն են»: ՆՏ

Աշխարհ

Հանդիպումներ Երեւանում

Մայիսի 9-ին Հայաստանի պատերազմի եւ աշխատանքի վետերանների հանրապետական խորհրդի նախաձեռնությամբ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքում տեղի ունեցավ Հաղթանակի օրվան նվիրված երեկո:

Հանդիպության ընթացքում ելույթ ունեցան պատերազմի եւ աշխատանքի վետերանների հանրապետական խորհրդի նախագահ, գեներալ Ատոմ Ղազարյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խիկար Բարսեղյանը, վարչապետ Հրանտ Բագրատյանը:

Երեկոյին ներկա էին նաեւ Հայաստանի Ռազմավար ազատական կուսակցության Հանրապետական վարչության փոխատենապետ Կարեն Կոստանդյանը, վարչության անդամներ, ՀՀ ԳԽ պատգամավորներ Վիգեն Խաչատրյանը, Սամվել (Մելս) Սահակյանը, Սամվել Մայիլյանը:

Մայիսի 9-ին, ժամը 9:30-ին Հայաստանի Ռազմավար ազատական կուսակցության անունից Անհայտ զինվորի գերեզմանին ծաղկեպսակ դրվեց ՀՌԱԿ ՀՎ ատենապետ Ռուբեն Միրզախանյանի, փոխատենապետ Կարեն Կոստանդյանի, վարչության անդամներ Լեւոն Բաբայանի, Սամվել (Մելս) Սահակյանի, Սամվել Մայիլյանի, Համլետ Կարապետյանի, Սուրիաս Թորոսյանի, Հովհաննես Դուրգարյանի, Արմեն Սողոյանի, Պետռ Ղազարյանի, Երեւան քաղաքի ՀՌԱԿ ակումբների վարչությունների այլ անդամների կողմից:

ՀՌԱԿ ներկայացուցիչները հարգանքի տուրք մատուցեցին 1941-45 թթ. պատերազմում զոհված հայ ժողովրդի հերոս զավակներին:

Այցելություն Գյումրի

Մայիսի 8-ին Գյումրի այցելեցին ՀՌԱԿ ՀՎ ատենապետ Ռուբեն Միրզախանյանը, ՀՌԱԿ պատգամավորական խմբակցության անդամ, ՀՀ ԳԽ քարտուղար Վարազդատ Ավոյանը, ՀՌԱԿ ՀՎ անդամ, Թեքեյան մշակութային միության նախագահ Սուրիաս Թորոսյանը եւ ՀՌԱԿ ավագ գործիչ Ավետիք Հարությունյանը:

ՀՌԱԿ ներկայացուցիչները այցելեցին Գյումրիի Վ. Թեքեյանի անունը կրող թիվ 2 միջնակարգ դպրոց, հանդիպում ունեցան դպրոցի մանկավարժական կոլեկտիվի հետ, դպրոցի ուսուցիչներին եւ աշխատակիցներին հանձնեցին ՀԲՄԻ Փարիզի մասնաճյուղի կողմից ուղարկված ծանրոցները:

ՀՌԱԿ ՀՎ ատենապետ Ռուբեն Միրզախանյանը հանդիպում ունեցավ Շիրակի թեմի առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի հետ: Զրույցի ընթացքում քննարկվեց սոցիալ-տնտեսական իրավիճակը Գյումրիում, ներկայացվեց ՀՌԱԿ դիրքորոշումը Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքականության վերաբերյալ: «Ազգ»

Պատերազմ

ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՆԳԻՍՏ

Քարոզչական գրոհը շարունակվում է

Շաբաթ եւ կիրակի օրերին իրադրությունն ինչպես Լեռնային Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանի սահմանամերձ շրջաններում շարունակում էր մնալ լարված, թեեւ ռազմական լայնածավալ գործողություններ չեն արձանագրվել: Ղարաբաղի Մարտունու եւ Հադրութի շրջանների սահմանամերձ հատվածներում արձանագրվել են միայն առանձին կարճատեւ փոխհրաձգություններ, որոնց հետեւանքով հայկական կողմից տուժածներ չեն եղել: Թեեւ վերջին օրերի ընթացքում մասնավորապես Ղուբաթլիի շրջանում շարունակվում են նկատվել ադրբեջանական բանակի մարտական տեխնիկայի եւ կենդանի ուժի մեծ կուտակումներ, այնուամենայնիվ իրադրությունը հանգիստ է եղել նաեւ Լաչինի մարդասիրական միջանցքի հարավային մասերում: Մարտակերտի եւ Քելբաջարի շրջաններում նույնպես ռազմաճակատի գծի էական փոփոխություններ չեն արձանագրվել: Փոխարենը Ադրբեջանն ակտիվացրել է ռազմական գործողությունները Հայաստանի սահմանամերձ շրջանների ուղղությամբ՝ կիրակի օր Ղուբաթլիի շրջանի ռազմական հենակետերից հրետակոծվել են Գորիսի շրջանի Շուռնուխ գյուղի հայկական պատշգամբային դիրքերը: Հիշեցնենք, որ ավելի վաղ հայ-ադրբեջանական սահմանի այս հատվածում նկատվում էին հակառակորդի ռազմական տեխնիկայի եւ կենդանի ուժի զգալի կուտակումներ: Հայկական ուժերը ստիպված են եղել դիմել պատասխան համարժեք գործողությունների, որից հետո հրետակոծությունը դադարել է: Բարեբախտաբար հայկական կողմից տուժածներ չկան:

Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից տեղեկացնում են նաեւ, թե նույն օրը Նախիջեւանի ռազմական հենակետերից հրետակոծվել են Եղեգնաձորի շրջանի Խաչիկ եւ Արենի գյուղերը: Մի քանի արկ ընկել է Խաչիկ գյուղի վրա, իսկ Արենիում վնասվել է մեկ տուն: Տուժածներ չկան: Այստեղ նույնպես հայկական ուժերը պատասխան կրակ են բացել: Իրադրությունը լարված է եղել նաեւ հանրապետության հյուսիս-արեւելքում, որտեղ Ադրբեջանի Ղազախի շրջանի տարածքից հրետակոծվել են Իջեւանի շրջանի Կիրանց եւ Բերքաբեր գյուղերի հայկական պաշտպանական դիրքերը: Այստեղ նույնպես տուժածներ չեն եղել:

Այն հանգամանքը, որ ձեռնպահ մնալով լայնածավալ ռազմական գործողություններից՝ Ադրբեջանը միաժամանակ շարունակում է մեծ կուտակումներ իրականացնել Ղարաբաղի հարավային շրջանների եւ Կաղանի շրջանի ուղղությամբ, վկայում է, որ լարվածության թուլացման մասին խոսելը դեռ վաղ է, եւ ամեն վայրկյան կարելի է սպասել ռազմական գործողությունների նոր ակտիվացում: Միաժամանակ ՍՆԱՐՖ գործակալությունը հաղորդում է, թե ԼՂՀ լրատվության եւ մամուլի պետվարչության ղեկավար Մարսել Պետրոսյանի կարծիքով, ադրբեջանական կողմը Ղարաբաղի վրա ուժային ճնշում գործադրելու քաղաքականության մեջ ձախողվել է եւ ներկայումս բավականին հաջող կերպով փորձում է աշխարհին համոզել, թե Հայաստանն Ադրբեջանի դեմ ագրեսիա է իրականացնում: Այս մասին է վկայում նաեւ Ադրբեջանի նախագահի միջազգային հարցերով խորհրդական Վաֆա Գուլուզադեի այն հայտարարությունը, որ եթե Հայաստանն իր զորքերը դուրս չբերի Ադրբեջանի տարածքից, ստիպված կլինի անել դա միջազգային հանրության ճնշման տակ: Ընդ որում, Վաֆա Գուլուզադեն Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ընդունված բանաձեւը որակել է որպես ադրբեջանական դիվանագիտության մեծ հաղթանակ: Մարսել Պետրոսյանն ընդգծել է, որ միջազգային հեղինակավոր փաստաթղթերից ոչ մեկում չի խոսվում Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքի գավթման մասին, եւ իրականում պատերազմն ընթանում է Ադրբեջանի եւ նրա կողմից ագրեսիայի ենթարկված Լեռնային Ղարաբաղի միջեւ:

Ինքնին հասկանալի է, որ ադրբեջանական կողմի նման հայտարարությունները նպատակ ունեն մի կողմից արդարացնել Թուրքիայի բացահայտ ռազմական աջակցությունը, մյուս կողմից հող նախապատրաստել ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այլեւ Հայաստանի դեմ ձեռնարկվելիք հնարավոր լայնածավալ գործողությունների համար: Վերջին հաշվով ակնհայտ է, որ Քելբաջարի շրջանը գրավել են ոչ թե Հայաստանի, այլ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը, ուստի այդ տարածքից հայկական զորքերի դուրսբերման շուրջ ցանկացած բանակցություններ որեւէ արդյունք կարող են տալ միայն այն դեպքում, եթե դրանց մասնակցում են նաեւ Ղարաբաղի իշխանությունները՝ որպես հակամարտության իրավահավասար կողմ եւ այդ շրջաններում իրադրությունն ամբողջովին վերահսկող ուժ: Հենց այս փաստի անտեսումն է, որ ռուս-բուրֆ-ամերիկյան նախաձեռնության ձախողման պատճառ դարձավ: Եւ եթե ընդունենք, որ նախաձեռնության հեղինակների համար ի սկզբանե կանխատեսելի էր նման ելքը, պետք է ենթադրել, որ նախաձեռնության նպատակը ոչ այնքան հակամարտության խաղաղ կարգավորումն էր, որքան Հայաստանի եւ Ղարաբաղի մերժումը ստանալը՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով:

ԱՐՄԵՆ ԲԱԴԱՍԱՐՅԱՆ

Մոսկվա

Հայր Վիկտորը ասուլիս է տալիս եւ անհարմար վիճակում հայտնվում

Մոսկվա, 10 մայիս, ՍՆԱՐՖ: «Ադրբեջանը նախկին ԽՍՀՄ տարածքում գտնվող միակ պետությունն է, ուր երբեմն չի եղել հակասեմիտիզմ», հայտարարեց Բաֆու քաղաքի եվրոպական հրեաների համայնքի նախագահ Բորիս Վայնգոլցը մայիսի 7-ին Մոսկվայում Ադրբեջանի Հանրապետության լիազոր ներկայացուցչությունում տեղի ունեցած մամուլի ասուլիսում: Ինչպես պարզվեց, հրեաները Ադրբեջանում ապրում են ավելի քան 2.5 հազարամյակ:

Բորիս Վայնգոլցը եւ Ադրբեջանի ուղղափառ եկեղեցիների գործակալ հայր Վիկտորը Ռուսաստանի մայրաքաղաք էին ժամանել Կովկասի մուսուլմանների հոգեւոր վարչության ղեկավար Շեյխ ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեի եւ համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի երկրորդի հանդիպմանը մասնակցելու համար:

Լրագրողների հետ հանդիպմանը Շեյխ ուլ Իսլամը մեկ անգամ եւս հաստատեց, որ հայ-ադրբեջանական հակամարտությունը չունի կրոնական հիմք, իսկ «իր ջիհումներն ու հանդիպումները Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հետ փորձ է, չնայած կրոնների տարբերությանը, Ամենաբարձրյալի հավատով բարեւար կերպով ազդել քաղաքագետների վրա եւ ջուսափույթ խաղաղ ելքի հասցնել հինգերորդ տարին շարունակվող այս նպատակի պատերազմը»:

Ինչ վերաբերում է Ադրբեջանում արմատականության տարածման միտումին, ապա մուսուլմանների հոգեւոր վարչության ղեկավարը գտնում է, որ «նման միտում չկա, թեկուզ այն պատճառով, որ խորհրդային իշխանության տարիները լուրջ վնաս են հասցրել իսլամին եւ շատ տարիներ կպահանջվեն նրա ազդեցության «այն» մակարդակի վերականգնման համար, որն եղել էր մինչեւ 1917 թ.»:

Հայր Վիկտորը իր հերթին հրապարակեց ավելի վաղ պատրաստված «զեկուցումը», որի մեջ նկարագրվում է Ադրբեջանում բնակվող ռուսների վիճակը եւ նշվում, որ ռուսական համայնքը իհարկե դատապարտում է Հայաստանի ագրեսիան, «հայկական զորքերը էլ ավելի են խորանում Ադրբեջանի տարածքը այն ժամանակ, երբ Ադրբեջանը նույնիսկ չի փորձել գրավել օտար հողի ոչ մի թիզ»: 1990 թ. հունվարյան զոհվածների հիշատակին նվիրված սգո օրերին, հայր Վիկտորի խոսքերով, ռուսները դուրս են եկել Բաֆվի փողոցները «ադրբեջանցի եղբայրներ, ռուսները ձեզ հետ են» պաստառներով:

Սնարֆի թղթակցի այն հարցին, թե «ո՞ւմ հետ էին ռուսները հայկական ջարդերի օրերին», տեր հայրը պատասխանեց, որ իհարկե, նրանք չեն եղել «այդ «պլանդակությունները» կատարող հրոսակների խմբի հետ» եւ զարմանք արտահայտեց, երբ թղթակցից իմացավ, որ այդ «պլանդակությունները» տեղի էին ունենում մի քանի օր եւ հրոսակների «խմբին» հաջողվել էր սպանել տասնյակ հայերի եւ քաղաքից դուրս քշել մարդկանց, որ այսօր այդման լավ ապրում են ռուսները: Այն հարցին, թե ի՞նչ վիճակում է այսօր Բաֆվի հայկական եկեղեցին, նա ուրախությամբ պատասխանեց, որ Համայն Ռուսիո պատրիարքն առաջարկել է վերակսել ժամերգության արարողությունը այդ եկեղեցում: Իսկ ո՞վ է կատարելու արարողությունը եւ ո՞ւմ համար հարցերին, հայր Վիկտորը շփոթված թոթվեց ուսերը:

Ի դեպ, Սնարֆի թղթակիցը բոլոր այս հարցերը տվեց մամուլի ասուլիսի ավարտից հետո, որը կազմակերպվել էր հիմնականում ադրբեջանցի լրագրողների եւ ներկայացուցչության աշխատակիցների համար, որպեսզի տեր հոր բավականին անհարմար վիճակը չտասկանա: ■

Մայիսի 8-10-ը ՌԴ հատուկ հանձնարարությունների դեսպանը եղել է Հայաստանում եւ Ղարաբաղում: Վլադիմիր Կազիմիրովը, որը երեւան էր ժամանել մայիսի 8-ին, մայիսի 9-ին այցելեց Ստեփանակերտ, որտեղ հանդիպեց ԼՂՀ ղեկավարության հետ: Երեւանում Կազիմիրովը տեսակցել է Հայաստանի նախագահի հատուկ հանձնարարությունների դեսպան Դավիթ Շահնազարյանի, ինչպես եւ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Մայիսի 10-ի առավոտյան Կազիմիրովը մեկնեց Մոսկվա: ՆՏ

Կամերային երաժշտության տուն

«Հայաստան» հեռուստաընկերություն

11.05.1993 թ.

Համերգ. «Օպերային բեմի երիտասարդ ձայները»

Մասնակցում են.

Հասմիկ Հացագործյան
Գայանե Գրիգորյան
Նունե Բաղալյան
Անահիտ Շահարյան
Արա Ավանյան
Հայկ Դեհնյան
Վաղարշակ Օհանյան
Կարեն Միրզոյան

Համերգին մասնակցում է Ազգային օպերայի եւ բալետի կամերային նվագախումբը

Գլխավոր դիրիժոր՝
Վիլեն Շարլոլյան

Ծրագրում. հայկական եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ
Համերգը հովանավորում են Ա.Ա.Մ. եւ «Նորինվեստ» ընկերությունները:

Տոմսերը վաճառվում են Կամերային երաժշտության տան տոմսարկղում:
Սկիզբը ժամը 16.00-ին

Բաֆու

«Վարձկանների» դատը շարունակվում է

Բաֆվում շարունակվում է անցյալ տարվա աշնանը Ղարաբաղում ձերբակալված ռուսաստանցի վեց զինծառայողների դատը: Նրանք (1 սպա, 2 սերժանտ եւ 3 զինվոր) ծառայում էին Հայաստանում տեղաբաշխված 7-րդ ռուսական բանակի սպորտաժանումներից մեկում: Անցյալ տարվա ամռանը նրանք ուղարկվել էին Ղարաբաղ եւ մարտերին մասնակցել հայերի կողմում: Դատն անցկացվում է դռնփակ, բայց հայտնի է դարձել, որ դատախազը բոլոր դատապարտյալների համար պահանջել է առավելագույն պատժաչափ: Ադրբեջանի զինվորական դատախազությունում, Թուրան գործակալության ստացած տեղեկությունների համաձայն, դատավարությունը կարող է շարունակվել մինչեւ այս շաբաթավերջ: Սնարֆ

Էլչիբեյը Ռոստրոպովիչին հրավիրեց Բաֆու

Ադրբեջանի նախագահ Ա. Էլչիբեյը պատասխան ուղերձ հղեց հռչակավոր երաժիշտ Մստիսլավ Ռոստրոպովիչին, որով շնորհակալություն հայտնեց Մոսկվայի մարզում Հայաստանի եւ Ադրբեջանի մշակույթի գործիչների հանդիպում անցկացնելու նախաձեռնության համար: Ինչպես արդեն հաղորդվել է, Ռոստրոպովիչն այդ առաջարկությամբ Էլչիբեյին ուղերձ է հղել անցյալ շաբաթ: Պատասխան ուղերձում Ադրբեջանի նախագահը պատշաճ ընդունելություն է խոստացել Ռոստրոպովիչի գաղափարը: Իր հերթին Էլչիբեյը մաեստրոյին հրավիրեց այցելել ծննդավայր Բաֆու: Սնարֆ

ԼՂՀ

Համալսարանի բացման արարողություն

Ստեփանակերտ, 10 մայիս, Սնարֆ: Այսօր Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի բացման պաշտոնական արարողությունը: Հանդիսությանը մասնակցեցին Հայաստանի եւ Մոսկվայի գիտական աշխարհի ներկայացուցիչները, այլ երկրների պատվավոր հյուրեր: «Ցավոք, Լեռնային Ղարաբաղի պատմության մեջ առաջին համալսարանի ծնունդը համընկել է ԼՂՀ համար դժվարին ժամանակների հետ, լրագրողներին ասաց համալսարանի ռեկտոր Արտաս Ավանիսյանը: Այսպես, մեր 2000 ուսանողներից 400-ը մասնակցում է ռազմական գործողություններին, բուհի 27 սան իր կյանքն է տվել հայրենիքի ազատագրության համար, 110-ը՝ վիրավորվել»: Այսօր համալսարանն ունի 6 ֆակուլտետ, այդ թվում այնպիսի հեղինակավոր, ինչպիսին են տնտեսական, ինժեներական եւ բնական գիտությունների ֆակուլտետները:

Ղարաբաղի միլիցիան գործում է

ԼՂՀ ՆԳ նախարար, միլիցիայի գնդապետ Արմեն Իսագուլովի վկայությամբ այս տարվա բացահայտված հանցագործությունները կազմում են 57.7 տոկոս նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 28.6 տոկոսի դիմաց: Այսօր ԼՂՀ ՆԳՆ աշխատակիցները հասարակական կարգի պահպանությունից բացի մասնակցում են նաեւ մարտական գործողություններին, ինքնապաշտպանության ուժերի հետ համատեղ միջոցներ են ձեռնարկում ադրբեջանի զինված կազմավորումների զինաթափման, պատանդների եւ ռազմագերիների փոխանակման ուղղությամբ: Ադրբեջանի կազմավորումներից արդեն առգրավվել է 1 ավտոմատ նռնականետ, 62 տրամաչափի 2 գնդացիր, 38 արկ, 21 ավտոմատ, 12 նռնակ, 70045 այլ զինամթերք եւ հանդերձանք: Միլիցիայի աշխատողների ջանքերով կամ անմիջական մասնակցությամբ արդեն փոխանակվել են շուրջ 200 հայեր: Անցած օպերատիվ միջոցառումների եւ մարտերի ընթացքում զոհվել են 26, վիրավորվել 60 միլիցիայի աշխատակիցներ: Գնդապետ Իսագուլովի խոսքերով, կարեւոր դերակատարություն, միլիցիայի մասին օրենքի քննարկման եւ ընդունման ծգձգումը բացասաբար են անդրադառնում հանցագործությունների դեմ պայքարի արդյունքների վրա: Վ. Ա.

digitised by A.R.A.R.@

Հեղինակություն

ՇՈՒՇԻԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 9-ին Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում բացվեց ցուցահանդես նվիրված Շուշիի եռգրավման առաջին տարելիցին: Անցյալ տարի ճիշտ այս օրն ազատագրվեց հայոց հնամյա քաղաքը:

Ցուցահանդեսը կրում է «Շուշի. մշակութային կյանքի մեկ դար» խորագիրը եւ ընդգրկում է 1820-ից 1920 թվականներն ընկած ժամանակամիջոցը: Երբ առաջին տարեթիվը սկիզբն է հինավուրց այս բնակավայրի մշակութային կյանքի վերելքի, աղա երկրորդը դրա ողբերգականորեն ընդհատված ղատմության թվականն է: 1920 թ. մարտի 23-ին թուրք-ադրբեջանական հրոսակների ձեռքով հրդեհի ճարակ դարձավ ողջ քաղաքը, իսկ նրա բնակչության մեծ մասը՝ մոտ 35 հազար մարդ, սրի քաշվեց:

Թանգարանի տնօրեն, գրականագետ եւ բարգմանիչ Հենրիկ Բախչինյանն այս ցուցահանդեսի գերագույն նպատակը համարեց այն, որ «մշակութային այս հանրությունը ակնհայտորեն ցույց է տալիս Շուշիի հայկական լինելը, որ այս հանգամանքը վավերացվում է փաստաթղթերով»:

Վերջիններս վկայում են, որ վերջին 100-ամյակում հայոց ուսանում զարգացել եւ ծաղկման են հասել գիտամշակութային գործի գրեթե բոլոր բնագավառները: Այստեղ, Էջմիածնից հետո առաջինը այստեղ է տպագրվել մեր առաջին գիրքը «Պատմութիւն Սուրբ գրոց» (1828 թ.) վերնագրով: Դրան հաջորդած գեղարվեստական եւ ղատմագիտական, ինքնուրույն թե բարգմանական գրականության հսկա խմբաքանակն այսօրվա հեռվից էլ զարմացնում է իր հարստությամբ եւ բազմազանությամբ: Նշենք միայն, որ այստեղ առաջին անգամ առանձին գրքով լույս տեսան Բաֆֆու «Խենթը», Մանուկ Աբեղյանի եւ Լեոյի երկասիրությունները, Ավետիք Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը» խիստ արժեքավոր ուսումնասիրությունը եւ այլն: Ընդհանուր առմամբ, այն ժամանակ քաղաքում գործել են 5 տպարաններ: Լույս են տեսել 21 անուն թերթ ու ամսագիր, որից 19-ը հայերեն, 2-ը ռուսերեն: Ցուցադրանքում տեղ են գտել նմուշներ գրականությունից եւ մամուլից:

Մեծ է Շուշիի եւ շուշեցիների ներդրումը հայ գրականության մեջ: Ցուցահանդեսում առանձին վահանակներ են նվիրված Լեոյին եւ Մուրացանին: Վերջինիս «Ռուզան» ղատմական դրամայի բեմադրմամբ 1891 թ. բացվեց Շուշիի «Խանդամիրյան թատրոն» իր 350 տեղանոց դահլիճով: Այդտեղ հյուրախաղերով հանդես են եկել Սիրանույշն ու Պետրոս Ադամյանը, Հովհաննես Աբելյանն ու Հովհաննես Զարիֆյանը: Փակցված ազդագրերի ղատճեններն ու վավերական այլ նյութերը ղատմում են այնտեղ բեմադրված հայ եւ արեւմտաեվրոպական դրամատուրգների այնպիսի ստեղծագործությունների մասին, ինչպիսիք են Հ. Պարոնյանի եւ Շիրվանզադեի պիեսները, Սերվանտեսի «Դոն Քիշոտը», Իբսենի «Դոկտոր Ստոկմանը», Շիլլերի «Ավազակները», Մոլիերի «Տարտյուֆը», Ջիակոմետտիի «Ոճրագործի ընտանիքը» եւ այլն:

Շուշիում են ծնվել եւ իրենց ստեղծագործական առաջին քայլերն արել հայ ականավոր դիմանկարիչ Ստեփան Աղաջանյանը եւ ոչ ղակաս հայտնի քանդակագործ Հակոբ Գյուրջյանը: Նրանց աշխատանքներից մի՞քանիսը ես տեղ են գտել ցուցահանդեսում:

Հիշածս գրողների եւ արվեստագետների մեծ մասն ավարտել է տեղի հայոց թեմական դպրոցը, որը հիմնվել է 1838 թ.: Դրան կից գործում էր քաղաքի առաջին տպարանը: Դպրոցի ղատմությունն ամփոփված է նրա նախկին սան Լեոյի (Առաքել Բաթախանյան) «Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի» աշխատության մեջ:

Ցուցահանդեսի կազմակերպիչները զանց չեն առել նաեւ այս քաղաքում մահմեդական բնակչության առկայության ղարագան, որը հետք է թողել նրա քաղաքաշինության մեջ: Դա արտացոլված է «Պարսկական մշակույթը» վահանակի վրա:

Կազմակերպման բարձր կուլտուրայով աչքի ընկնող այս ցուցադրանքը եզրափակվում է մերօրյա Շուշիի ղատկերներով եւ ղարաբաղցի իմաստուն կնոջ ու ժողովրդ շուշեցի մանչուկի մեծադիր լուսանկարներով՝ որպես ղատմության շարունակելիության խորհրդանիշ: Ներկայացվածը ցուցահանդես չէ սովորական իմաստով, այն ղատմություն է լուսանկարներում եւ փաստաթղթերում, ցուցահանդեսվկայագիր Շուշիի անցյալի, նաեւ ապագայի մասին: Այն, բացառությամբ Հայաստանի Ազգային ղատկերասրահից փոխառնված Ստեփան Աղաջանյանի կտավների, կազմված է Գրականության եւ արվեստի թանգարանի ֆոնդերի հիման վրա: Սա արդեն երկրորդ անդրադարձն է ղարաբաղյան թեմային, նրա մշակույթին: Երբ հանգամանքները թույլ տան եւ հնարավորություններ լինեն, կազմակերպիչները մտադիր են ցուցադրանքը ղտեղեցնել աշխարհով մեկ: Հավատացած ենք, որ այս ցուցահանդեսը կօգնի օտարներին ճիշտ ղատկերացում կազմել Շուշիի եւ ընդհանրապես Ղարաբաղի մասին, եւ այս առումով այն կարող է մեծ դեր կատարել: Հուսանք, որ կգտնվեն այս գործին նյութապես օգնել ցանկացող մարդիկ ու կազմակերպություններ: Ավելացնենք, որ ամենավերջում ողջ ցուցադրանքը հանգրվանելու է Շուշիում որպես նվիրատվություն:

ԼԵՎՈՆ ԼԱՇԿՅԱՆ

Գուգարք

Նախկինը դարձյալ նախկին ղաշտոնին

Ինչպես հայտնի է, Գուգարքի շրջխորհրդի նախկին նախագահ Էդիկ Մարտիրոսյանը (հայտնի է «Ճանճոյի էդո» անվամբ) հեռացել էր ատաղարեզից շուրջ մեկ տարի առաջ: Եւ ահա օրերս իր աշխատանքը վերսկսեց անցած տարվա սեպտեմբեր ամսին կիսաս մնացած հերթական նստաշրջանը: Մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքների մասին հաշվետվությամբ հանդես եկավ շրջխորհրդի նախագահ Համլետ Սարգսյանը: Նրա աշխատանքը ղատգամավորների կողմից գնահատվեց անբավարար: Օրակարգ մտցվեց Հ. Սարգսյանին անվստահություն հայտնելու հարցը, որին կողմ քվեարկեցին 65 ղատգամավորներից 48-ը: Հաջորդ օրվա նիստում առաջադրված երկու թեկնածուներից մեկը Էդիկ Մարտիրոսյանն էր: Քվեարկությանը մասնակցած 64 ղատգամավորներից 54-ը կողմ քվեարկեցին նախկին նախագահի օգտին: Շրջխորհրդի նստաշրջանը կշարունակվի մայիսի 14-ին:

ՄՈՆՎԵԼ ՄԻՔՈՅԱՆ
Մեր սեփ. թղթակից, Վանաձոր

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հենարկելով Սյունիք-Զանգեզուր տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագրի մշակման հարցը, կայացրել է հետեւյալ որոշումը (5 մայիս, 1993 թ., թիվ 250): Որոշմամբ ծրագրի ղատասխանատու է սահմանվել Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ գլխավոր մշակող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Սահմանվել է ծրագրի նախագծի կառավարություն ներկայացնելու ժամկետը՝ 1993 թվականի նոյեմբերի 15-ը: Ֆինանսների նախարարությանը հանձնարարված է էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ երկրաբաթյա ժամկետում ՀՀ կառավարություն ներկայացնել առաջարկություններ ծրագրի նախագծի մշակման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հատկացնելու վերաբերյալ:

Կյանք

ՄԱԿ-ի սեմինարը Երեւանում

Երեւան, 10 մայիս, Սնարք: Այսօր Երեւանում բացվեց ՄԱԿ-ի սեմինարը, որը կազմակերպվել է Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների գործերով գլխավոր կոմիսարի ներկայացուցչության հովանու տակ: Սեմինարին մասնակցում են հանրապետական խորհրդարանի, կառավարության եւ ակադեմիական հիմնարկների ներկայացուցիչները: Ծրագրում՝ գաղթի, մարդու իրավունքների, փախստականների իրավունքների ոլորտների իրավական տեսանկյուններին վերաբերող դասախոսություններ:

Նախօրեին, մայիսի 9-ին Ա. Խաչատրյանի համերգային դահլիճում տեղի ունեցավ սիմֆոնիկ համերգ ՄԱԿ-ի փախստականների գործերով գլխավոր կոմիսարի ղատվին: Սեմինարը կտեւի մինչեւ մայիսի 14-ը:

Հայաստանը կմասնակցի կոմիտեի աշխատանքին

Երեւան, 10 մայիս, Սնարք: Մայիսի 11-ին Փարիզում բացվում է Եվրոպայի խորհրդի խոշորագույն աղեսների ղատմանագրի մշակման ներկայացուցիչների կոմիտեի նիստը: Հանդիպման մասնակիցները կքննարկեն 1994 թ. այդ կազմակերպության գործունեության նախագիծը եւ բյուջեն, տարբեր կենտրոնների ծրագրերը, Չեռնոբիլյան աղեսի խնդիրները: Նախատեսվում է հիմնադրել նաեւ երկրաշարժերի կանխագուշակումները գնահատելու Եվրոպական կոնսորցիումի կոմիտե:

Կոմիտեի նիստին մշտական ներկայացուցչի կարգավիճակով առաջին անգամ կմասնակցի Հայաստանի ղատվիրակությունը՝ արտակարգ իրավիճակների ղետական վարչության փոխտնօրեն Ռոբերտ Առաքելյանի գլխավորությամբ:

Դատը չկայացավ բենզինի ղատճառով

Շենգավիթի շրջանի եղբայրության 3, Թելմանի 14 եւ Նիզամի 13 շենքերում 1992 թ. մարտի 8-ին տեղի ունեցած ղայթյունի աթիվ քրեական գործ էր հարուցվել: Եւ 1993 թ. մարտից ՀՀ Գերագույն դատարանում տեղի է ունենում գործով մեղադրվող Արամ Գրիգորյանի դատավարությունը, որը Նիզամի 13 շենքի բնակիչ է: Սկսած այդ ժամանակից դատավարությունը ցարդ բազմիցս հետաձգվել է զանազան ղատճառներով:

Մայիսի 10-ին ՀՀ Գերագույն դատարանի դահլիճում ղետք է տեղի ունենար այդ ըստ էության դեռեւս չսկսված, բայց շարունակ հետաձգվող դատավարությունը: Սակայն այս անգամ եւս այն չսկսվեց, ոմանց համար օբյեկտիվ, իսկ նշված շենքերի բնակիչների համար՝ սուբյեկտիվ ղատճառով: Ինչպես հավակվածներին հայտնել էր ՀՀ Գերագույն դատարանի անդամ Համլետ Գեւորգյանը, բենզինի բացակայության ղատճառով հնարավորություն չէր եղել մեղադրյալին հասցնել դատարանի դահլիճ:

Գ. Ն.

Հայագիտական գրքերի ցուցահանդես Սանկտ Պետերբուրգում

Մայիսի 12-31-ը Սանկտ Պետերբուրգում, տեղի ճարտարապետների միության տրամադրած տարածքներում կբացվի իտալական «Օմմե» հրատարակչության ավելի քան 20 տարիների ընթացքում տպագրած հայագիտական գրքերի ցուցահանդես: Իտալական կողմից ցուցահանդեսի նախաձեռնողն ու կազմակերպիչն է ճարտ. Արա Զարյանը:

Շուշին՝ Ղարաբաղի ադամանդե մայրաքաղաքը

Մեկ տարի առաջ ազատագրվեց Շուշին՝ Ստեփանակերտը կրակի օղակի մեջ խեղդող Ադրբեջանի վերջին հենակետը Ղարաբաղում: Վեց ամիս շարունակ Շուշիից՝ Ղարաբաղի վաղեմի մայրաքաղաքից հրետակոծվում, ավերվում էր Ստեփանակերտը, քարուքանդ էին արվում մերձակա հայկական գյուղերը՝ Շոռը, Քարինտակը, Քարաբենը... Վեց ամիս շարունակ Ղարաբաղը հայկական էր ու միաժամանակ հայկական չէր՝ ադրբեջանցիները լավ էին յուրացրել այն ճշմարտությունը, թե ով տիրում է Շուշին, տիրում է ամբողջ Ղարաբաղին: Յուրացրել էին ու Ղարաբաղի վաղեմի մայրաքաղաքից ավերում էին նրա մայրաքաղաքը՝ տուն առ տուն, շենք առ շենք, ղաս առ ղաս: Իրենք էլ գիտեին, որ այդպես շարունակվել չի կարող, սա իրենց ու մահու ղատերազմ է, բայց ի՞նչ անեն, գործն անում էին, որովհետեւ գիտեին նաեւ, որ Շուշին իրենցը չի եւ չի լինելու, ու հայերը ղատաստան հարված ուզեցնելու էին՝ զինամթերքի ղահեստը Ղազանչեցոց հայկական եկեղեցում էր, «Գրադ» կայանները՝ հայկական թաղամասում...

Այդ գիշեր դեռի Շուշիի ահարկու ժայռերը գնացող փոքրաթիվ հայկական ջոկատների զինվորները, որ մերձակա հայկական գյուղերի բնակիչներն էին, հասատ գիտեին՝ իրեն գնում են ոչ միայն փրկելու կրակե օղակում հայտնված Ստեփանակերտը, այլեւ ազատագրելու Ղարաբաղի ադամանդե մայրաքաղաքը: Ու գիշերային խավարում ղարաններով ժայռերն ի վեր մագլցող փոքրաթիվ հայկական ջոկատների՝ ղատերազմի թելադրանքով զինվոր դարձած գյուղացիները չէին մտածում, որ իրենք ռազմական առումով անօրինակ ու անհեռանկար մի գործ են կատարում: Դա հասկանալի էր: Անհասկանալի էր, որ հինավուրց Շուշին, իրենց Շուշին բնամու ձեռին էր ու մահ էր սփռում Ղարաբաղի վրա: Այդպես շարունակվել չէր կարող եւ չշարունակվեց:

Շուշիի ազատագրումով Ղարաբաղը ղեռություն դարձավ, եւ Ստեփանակերտը կարող էր դուրս գալ նկուղներից, ազատ շունչ քաշել, նորոգել իր քանդված օջախները, բուժել վերքերը, առանց Շուշիի «Գրադ»-ից վախենալու հողին հանձնել իր զավակներին, ծաղիկներ դնել առաջինը Շուշի մտնելիս խփված հայկական տանկի վրա... Շուշիի ազատագրումով Ղարաբաղը դարձավ ղատերազմող ղեռություն, որը ստիպված է մտածել ոչ թե իր մայրաքաղաքի անվտանգության, այլ ստահմանների ղատշտանության ու ռազմաճակատի գծի կայունության մասին: Ռազմաճակատի գիծը կտրուկ տեղափոխվեց, հեռացավ Ստեփանակերտից, ու ղատերազմող ղեռությունը վերջապես նաեւ բիկունք ունեցավ: Թիկունք, որն այսուհետեւ նպաստ Շուշին էր լինելու՝ Ղարաբաղի աղամինվող արժվաքույնը:

Շուշին ազատագրվեց այսօր ամենեին էլ ոչ դիվանագիտական նկատառումներով «ԼՂՀ ինքնաղատշտանության ուժեր» կոչվող բանակի կողմից: Բանակ, որն ամրացավ նաեւ Շուշիի համար զոհված մարտիկների արյան շաղախով, եւ որի ամրությունն այսօր Ղարաբաղ ղեռության գոյության միակ կայուն երաշխիքն է: Բանակ, որն ուղիղ մեկ տարի առաջ Ղարաբաղի ադամանդե մայրաքաղաքն էր ազատագրում եւ այսօր ղատշտանում է Ղարաբաղի՝ մայրաքաղաք ունենալու իրավունքը:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Մեկամսյա ընդմիջումից հետո վերսին լույս է տեսնում նրորգված «Հայրենիքի ձայնը», որոնց անկախ շաբաթաթերթ, որն իր խոսքը հասցեագրում է թե՛ Մայր հայրենիքի, թե՛ սփյուռքի համայն հայությանը:

Կարդացեք «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը, որ վաճառվում է բոլոր կրոպկենում:

Տեխնիկա

Տեխնիկան հանձնվում է եւ աշխատում

ՀՀ կառավարության որոշման համաձայն, Ախուրյանի շրջանում սկսվել եւ ընթանում են գյուղատնտեսական մեքենաների շահագործման կայանի (ԳՇԿ) ստեղծման աշխատանքները: «Ագրոսղասարկում» շրջանային միավորումում ստեղծված հանձնաժողովն այժմ զբաղված է տեխնիկայի ընդունման հարցերով: Մինչեւ մայիսի 7-ը ԳՇԿ-ի հաշվեկշռում է վերցվել շրջանի 8 գյուղերի տեխնիկան՝ շուրջ 80 տրակտոր, 15 կոմբայն, մեծ-փանակությամբ շարքացաններ ու գյուղգործիքներ: Կայանը շրջանի գյուղերում կունենա 8 տեղամասեր, որոնցից յուրաքանչյուրը կաղաստարկի տվյալ եւ հարեւան գյուղերին: Տեխնիկայի ընդունմանը զուգընթաց ստեղծվում են նաեւ այդ տեղամասերի աշխատանքն ապահովող կազմակերպական կառույցները, որոնք արդեն սկսել են գործել:

Ինչպե՞ս են ընդունում ԳՇԿ-ի ստեղծման եւ տեխնիկայի ընդունման աշխատանքները, ի՞նչ դժվարություններ ու խոչընդոտներ կան այդ ճանապարհին: «Նախ, իմ կարծիքով, կառավարության որոշումը դեռ աշնանը ղետք է ընդունված լիներ, որպեսզի հասցնեինք տեխնիկան ինչպես հարկն է նախապատրաստել, ապաց «Ագրոսղասարկում» շրջմիավորման գլխավոր ինժեներ, միավորման հանձնաժողովի նախագահ Թոմիկ Հակոբյանը: Բանն այն է, որ վերջին 2-3 տարիներին գյուղխորհուրդների, ստեղծված տնտեսավարկային ձեռնարկությունների տրամադրության տակ եղած գյուղմեքենաները ինչպես հարկն է չեն նորոգվել եւ անխնամ շահագործման ղատճառով որոշ գյուղերում դրանք բավականին վատ վիճակում են:

Գյուղնախարարությունից ստացվելիք վարկերի հարցը, որոնց կարիքն այժմ խիստ զգացվում է, ղահանջամասերի ձեռքբերման, ամբողջ տեխնիկան սարքի գցելու եւ աշխատեցնելու համար, դեռեւս չի լուծված: Դեռ հասկված չէ նաեւ, թե ինչ հիմունքներով, ինչ գներով ենք գնելու նախկին տնտեսությունների մեքենաներն ու գյուղգործիքները: Աշխատանքը շարունակվում է, եւ ձգտում ենք հնարավոր լուծումներ գտնել առաջացող հարցերին: Ամենակարեւորը, խուսափում ենք ավելորդ շտապողականությունից եւ հաղթեղությունից, որ նաեւ չխանգարենք գարնան դաշտային աշխատանքներին»:

Հանձնմանը զուգընթաց տեխնիկան շարունակում է աշխատել դաշտում, ԳՇԿ-ի կողմից գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների աղատարկումը կատարվում է դայմանագրային հիմունքներով, ըստ մշակված նորմերի:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Մեր սեփ. թղթակից, Գյումրի

Հայաստանի Ամերիկյան համալսարան

Հայաստանի Ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) կազմակերպում է դասընթաց «Միջազգային տնտեսական հարաբերություններ» թեմայով:

Դասախոսությունները կանցկացվեն մայիսի 18-ից հունիսի 8-ը, 1993, երեքշաբթի եւ հինգշաբթի օրերին, երեկոյան ժամը 6.00-9.00:

Դասախոսությունները կընթանան անգլերեն լեզվով, միաժամանակյա թարգմանությունն ապահովվում է:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել Հայաստանի Ամերիկյան համալսարան 27.33.70 հեռախոսահամարով:

digitised by A.R.A.R.@

Վերլուծություն

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉՊԵՏՔ Է ԽԱԲՎԵՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐՈՎ

Իրանական ազդեցիկ բերթի կարծիքը

Ապրիլի 13-ին ազերի ուսանողների հակահայկական ցույցն Իրանի մայրաքաղաքում, հակառակ հայկական զանգվածային լրատվության միջոցների, աննշան արձագանք է գտել եւ հիմնականում տեղեկացվել է մի քանի նախադասությամբ: Իսկ քաղաքական մեկնաբանություններում, բացառությամբ ծայրահեղ ընդդիմության եւ որոշ ազերի շրջանակների, հիմնականում կողմերին հորդորում են նստել բանակցությունների սեղանի շուրջ: Ավելի քան սարսափելի է, որ Հայաստանի քաղաքական որոշ շրջանակներ շտապեցին ուռճացնել երեւույթը, կարծես նպաստակ ունենալով արդարացնել Հայաստանի իշխանությունների վարած քաղաքականությունն Իրանի նկատմամբ եւ սառնության պահպանումը: Ստորեւ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Թեհրանում հրատարակվող «Աբրար» օրաթերթի ապրիլի 14-ի՝ ցույցի հաջորդ օրվա համարում «Քաղաքական մեկնաբանություն» վերնագիրը կրող բաժնում լույս տեսած «Ղարաբաղն Ադրբեջանի բույլ կողմը» մեկնաբանությունը, որի հեղինակն է օրաթերթի մեկնաբան Հասան Ֆարհին:

Մի քանի ամիս շարունակ հայկական եւ ադրբեջանական ուժերի միջեւ հյուծող բախումներից հետո վերջապես հայկական ուժերը ռուսական զինված ուժերի օգնությամբ ջախջախիչ հարվածներով պարտության մատնեցին Ադրբեջանի զինված ուժերին, գրավելով զգալի տարածքներ:

Ղարաբաղում եւ Ադրբեջանում իրավիճակն այն աստիճան է լարվել, որ Բաքուն օգնություն խնդրեց այն բոլոր երկրներից, որոնց նկատմամբ բարեկամական հավակնություններ ուներ: Ադրբեջանական պաշտոնատարները անտեսելով իրենց նախկին հակասական դիրքորոշումները այդ երկրների վերաբերյալ եւ լոկ այդ ճգնաժամից դուրս գալու նկատառումով սկսեցին դիվանագիտական լայն գործունեություն ծավալել: Մինչդեռ Ադրբեջանի պաշտոնատարները Բաքվի պարտությունը դասալքությամբ: Ադրբեջանցիները հայտնվելով դժվարին կացության մեջ, մի կողմից օգնություն հայցում է, ինչ գնով էլ լինի, բույլ չտալ, որպեսզի իր սահմաններին կից ձեւավորվի Հայաստանի պետությունը: Թուրքիան, որ 1915 թ. ապրիլի հայկական եղեռնից հետո մշտապես հակահայկական դիրքորոշում է ունեցել, այսօր ստստափահար է անկախ Հայաստանի ստեղծվելու առիթով: Հենց դա է պատճառը, որ Թուրքիան գրգռելով ազերիներին, իշխանության գլուխ կանգնեցնելով Էլչիբեյին, յուր լցրեց դարաբաղյան ընդհարումների կրակի վրա: Իսկ Իրանն այդ ընթացքում կողմերին առաջարկեց, որպեսզի Ղարաբաղի հիմնահարցը լուծեն բանակցությունների միջոցով, եւ այդ ուղղությամբ նույնիսկ երեւանի եւ Բաքվի միջեւ Թեհրանում համաձայնություն կայացավ: Սակայն ազերիները, որ կարծում էին, թե ռազմական օգնություն ստանալով Անկարայից, ռազմական առումով դիրքային առավելության կհասնեն հայերի նկատմամբ, ուշադրության չարժանացրին համաձայնությունը: Մինչեւ որ միառժամանակ անց հայերը կարողացան ամրապնդել իրենց դիրքերը եւ վերսկսեցին հարձակումներն ազերիների կրակակետերի վրա:

Քելբաջարի անկումը, որն ուղեկցվում էր Ադրբեջանի ուժերի դասալքությամբ ռազմաճակատից, վառ ապացույցն է այն իրողության, որ կողմերից որեւէ մեկի հաջողությունը պայմանավորված է զուտ օտար ուժերի օգնությամբ, այլապես Հայաստանը եւ Ադրբեջանը հավասարազոր են, եւ նրանցից ոչ մեկը հաղթող դուրս չի գա: Ուստի Հայաստանը եւ Ադրբեջանը չպետք է խաբվեն Անկարայի եւ Մոսկվայի խոստումներով, այլ պայմաններ ստեղծեն խաղաղության բանակցություններ սկսելու նպատակով եւ ընդառաջեն միմյանց խաղաղ գոյակցության սկզբունքներով, քանի որ պատերազմի շարունակվելը ոչ ազերիներին, ոչ էլ հայերին օգուտ չի բերի:

«Ազգ»

Քննություն

ԱՄՆ-ում ընտանեկան կարերն ամուր են

Մայիսի 8-ին Միացյալ Նահանգներում նշվեց «Մայրիկի օր»: Ամերիկացիների ամենասիրած տոներից մեկը, որը 1908 թ. նշվում էր ընդամենը մեկ ամերիկյան նահանգում, իսկ արդեն 1914 թ. նախագահ Ֆրանկլին Ռուզվելտի ստորագրությամբ, կոնգրեսը վավերացրեց այն իբրեւ համամերիկյան տոն: Արդեն 80 տարի է, ինչ մայիս ամսի երկրորդ կիրակին դառնում է «Մայրիկի օր» տոնակատարության օր: Տոնի կապակցությամբ Միացյալ Նահանգների լրատվության միջոցները, հասարակական կարծիքի ուսումնասիրություններով զբաղվող հասատությունները կրկին անդրադարձան ընտանիքի հիմնահարցին, սերունդների կապի եւ հայրերի ու որդիների խնդիրներին:

Գաղտնիք չէ, որ աշխարհում եւ առանձնապես նախկին ԽՍՀՄ ժողովուրդների մեջ խիստ սուբյեկտիվ ստերեոտիպեր կան ամերիկացիների եւ նրանց կյանքի ամենատարբեր ոլորտների նկատմամբ: Դրանցից մեկը թյուր պատկերացումն է ամերիկյան ընտանիքի վերաբերյալ: Կարծիք կա, որ ընտանիքի ինստիտուտն այդ երկրում հասատուն չէ, առանձնապես երեխաների եւ ծնողների փոխհարաբերությունների հարցում: «Այո, մեր երկրում երիտասարդները վաղ են մտնում իսկական կյանք, արդեն են առանձին, վարում սեփական տնտեսությունը, ասում է ամերիկյան սոցիոլոգներից մեկը, եւ շարունակում, բայց դա ամենեին էլ այդպես չէ, ինչ կարծում են դրսում: Ամենասերտ հարաբերությունները ծնողների եւ զավակների միջեւ մի ժամանակ պահպանվում են կյանքի ողջ ընթացքում»: «Ազատություն» կայանի հաղորդած սոցիոլոգիական հարցման արդյունքներ գալիս են հավաստելու այս խոսքերը: Հարցման ենթարկվածների 50 տոկոսը ասել է, որ շարունակում է նյութական եւ այլ բնույթի աջակցություն ստանալ ծնողներից եւ նույնքան մարդիկ խենք են բազմակողմանի օգնություն ցույց տալիս ծնողներին: Ամերիկացի բոլոր ծնողներ, ինչպես եւ ողջ մնացյալ աշխարհում, իրենց ժամանակի մեծ մասը հատկացնում են թոռնիկներին, զբաղվում նրանց դաստիարակությամբ: Հազարավոր մանուկներ, որոնց ծնողներն ծանրաբեռնված են աշխատանքով, իսկ նյութականը նրանց տնական ընթրիքը եւ ծաղիկները կրկին ուժի մեջ են: Ընդհանրապես, նշում է «Ազատության» թղթակիցը, ներկայիս ամերիկյան մայրերն իրենց գեղեցիկ կազմվածքով, միշտ կոկիկ հարդարանքով, առույգ ու աշխույժ կանայք են, որոնց նայելիս դժվար է կողմնորոշվել՝ 35 տարեկան են, թե՞ 55: Ամերիկացի կանանց երկարատեւ դայֆարը հնարավորություն ստանալու համատեղել մայրությունը լիարժեք անհատական իմքնադրսեւորման հետ կարծես թե ստակվել է հաջողությամբ:

Իսկ ինչ վերաբերում է երկրի սահմաններից դուրս տարածված մեղմ ասած ոչ ճիշտ դատողություններին ամերիկյան ընտանիքի մասին, այդ հիմնականում մեղավոր են լրատվության միջոցները, որոնք փող են աշխատում սուր զգացումների եւ սենսացիաների միջոցով: «Ոչ ոք չի գրում հազարավոր ամուր ընտանիքների, ծնողների եւ զավակների ջերմ փոխհարաբերությունների մասին: Լրագրողներին ավելի շատ հետաքրքրում են ողբերգական դեպքերը, երբ ասենք որեւէ ծերունի լքված է զավակների կողմից: Իսկ այդպիսի փաստեր, կարծում եմ, կարելի է գտնել ցանկացած երկրում: Այլ հարց է, որ մեր մամուլը նման փաստերին շատ ավելի մեծ ուշադրություն է դարձնում», ասում է ամերիկացի սոցիոլոգներից մեկը: Ինչ արած, ԱՄՆ-ը ազատ երկիր է եւ եթե նրա լրատվությունն իր բիզնեսով անգամ որոշ վնաս է հասցնում սեփական երկրի կերդարին նրա սահմաններից դուրս, այդ դա նրանց անխախտ իրավունքների բաղկացուցիչ մասն է: Իսկ մեզ մնում է հուսալ, որ երբեւիցե կկարողանանք նույն շռայլությամբ վարձահատույց լինել նաեւ մեր մայրերին, եւ նրանք էլ գեղեցիկ ու առույգ կլինեն անկախ տարիքից: Եւ էլի, լավ կլիներ, եթե ամերիկյան քաղաքակրթության հարուստ ու բազմաշերտ ընդերքից քաղվեին ոչ թե էժանագին, զանգվածային արտադրման վաղանցիկ երեւույթներ, այլ այն հիմնարար արժեքները, որոնց վրա կառուցվել եւ բարգավաճում է այդ հզոր եւ առողջ հասարակությունը: Շնորհավոր ձեր տոնը, ամերիկացի մայրեր:

«Ազգ»

Նոր գիրք

Գիրք հայկական օրացույցի մասին

Հայկական օրացույցը, որ մեր ժողովրդի ստեղծած հազարամյա արժեքների անբաժան մասն է, անցել է հազարամյակների փորձություններով, մրցել իր ժամանակների լավագույն օրացույցների հետ եւ համաշխարհային տոմարագիտությանը ներկայացել որպես կատարյալ եւ ինքնատիպ համակարգ, ինչպես մեր լեզուն, գիրն ու մշակույթը:

Չնայած 1920 թվականի դեկտեմբերի 2-ին Հայաստանն ընդունել է նեղլա ազգային (Գրիգորյան) օրացույցը, այնուամենայնիվ, ինչպես աշխարհի հնագույն քաղաքակիրթ շատ ժողովուրդներ (ասորիներ, պարսիկներ, հրեաներ, արաբներ, չինացիներ, ճապոնացիներ եւ այլն), հայերս էլ իրավունք ունենք ժամանակակից օրացույցին զուգահեռ օգտվել մեր ավանդական ազգային օրացույցից, որ սկիզբ է առնում Ք. ա. 2492 թվականից՝ բաբելացի Բելի դեմ մեր ժողովրդի նախահայր Հայկի տարած հաղթանակի եւ հայերիս անվանակոչության տարուց:

Մեր հինավուրց օրացուցային համակարգից օգտվելու համար վաղուց ի վեր անհրաժեշտ էր հանրամատչելի շարադրանքով մի ձեռնարկ, որից կօգտվեին համապատասխան հետաքրքրություններ ունեցողները:

1981 թվականից պատմական գիտությունների թեկնածու Ռաֆայել Համբարձումյանը զբաղվել է հայկական օրացույցի ուսումնասիրման եւ նրան կրկին կյանք տալու գործով: Շատերն են հիշում «Գրքերի աշխարհ» ամսագրերում տպագրված նրա «Հրատարակենք հայկական օրացույց» հոդվածը, որտեղ պատմաբանը խոսելով ազգային օրացույցի վերականգնման անհրաժեշտության մասին, հրատարակել էր իր վերականգնած հայկական օրացույցի առաջին փորձը: Այնուհետեւ Ռ. Համբարձումյանը «Հայոց տոմարի ուսումնասիրություն» զրուցաշարով հանդես եկավ «Պիոներ» ամսագրի 1985 թ. համարներում, իսկ 1987 թվականին հրապարակեց հայոց ամսանուններով եւ օրանուններով առաջին պատի օրացույցը:

Եւ ահա, ամբողջացնելով երկարամյա ուսումնասիրությունների արդյունքները, պատմաբանն ընթերցողին է առաջարկում «Հայկական տոմար» գրքույկը, որը «Այբ Բեն Գիմ» բարեգործական միության հովանավորությամբ հրատարակել է «Հայաստան» հրատարակչությունը: Պատանի ընթերցողի համար նախատեսված այս ձեռնարկն ունի ճանաչողական արժեք, ընթերցողին ծանոթացնում է հայկական տոմարի ծագման ակունքներին, նրա զարգացման փուլերին:

Շարադրելով հայկական տոմարի մասին ընդունված տեսակետները, գրքի հեղինակը, իրար հաջորդող հանրամատչելի զրույցների ձեւով, մատուցվող նյութը զուգակցելով մեր ժողովրդի հնագույն դիցաբանական պատկերացումներին, ազգագրական, բանահյուսական, աստղագիտական, լեզվաբանական եւ պատմագիտական մեկնաբանություններով ամբողջացնում եւ հասկեցնում է եղած նյութը: Եւ քանի որ դարեր շարունակ հայ դպրոցներում ի թիվս այլ առարկաների ուսումնասիրվել է նաեւ հայկական տոմարը, այս օգտակար գիրքը կարող է օգնել մեզ վերականգնելու այդ ավանդույթը:

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բեռներ

Տնտեսական բեռեռները ճակատ առ ճակատ

Արեւելյան (ԽՍՀՄ գլխավորությամբ) եւ Արեւմտյան բլոկների (ԱՄՆ-ի ավագությամբ) միջեւ ընդհարումներն ավելի քան 40 տարի իրենց անմիջական ազդեցության տակ էին պահում միջազգային հարաբերությունների կարգը: Այսօր այդ դերը հանձնվել է նոր մրցակցությունների, որ հիմնականում տնտեսական դաշտում է ընթանում: Այս մրցակցություններն ասիճանաբար բյուրեղանում են աշխարհի տնտեսական 3 խոշոր բեռեռների շուրջ:

1. Ամերիկյան բեռեռ. ԱՄՆ-ը Կանադայի եւ Մեքսիկայի մասնակցությամբ ստեղծելով Հյուսիսային Ամերիկայի Մեծ շուկան, որի դայմանագիրն ստորագրվել է դեռեւս անցյալ տարի, ցանկանում է համահունչ դառնալ համաշխարհային տնտեսական մրցակցության նոր վիճակին: Այս նոր բլոկն ընդգրկում է 360 միլիոն ազգաբնակչություն, տարեկան 6214 միլիարդ դոլար համախառն ազգային եկամտով: ԱՄՆ-ն այսդիսով հնարավորություն է ստանում դիմադրել իր հզոր ասիական եւ եվրոդրական մրցակիցներին: Այս հզոր շուկայի ստեղծումը կարելի է դիտել որպես միջազգային փոխհարաբերությունների առայարեզում նշանակալից փոփոխություն երկու տասնկլյունից: Նախ, որ ԱՄՆ-ը Եվրոդրայի հետ 2-րդ համաշխարհային դասերազմից հետո տնտեսական միավորումներ կազմելու հարցում առանձնակի հակում չէր ցուցաբերում, այսօր անհրաժեշտ է համարում տնտեսական փոխհարաբերությունների ազատ գոտի ստեղծել: Մեծ շուկայի ստեղծման երկրորդ նշանակությունը դեսք է փնտրել հենց իր՝ Մեծ շուկայի կազմի մեջ: Այսինքն, զարգացող մի երկիր, այն է Մեքսիկան, շրջանային առեւտրական միավորման ընդերքում առաջին անգամ դաշնակից է դառնում աշխարհի հզորագույն արդյունաբերական երկրի հետ: Այս երեւույթը որոշ չափով խարխլում է «երրորդ աշխարհի» եւ «արդյունաբերական աշխարհի» միջեւ եղած ավանդական սահմանը:

2. Եվրոդական բեռեռ. Եվրոդայի տնտեսական ընկերակցությունն է 12 երկրների մասնակցությամբ, որն արդեն անցել է մաքսային եւ առեւտրի միավորման փուլերը եւ այժմ, չնայած զգալի դժվարությունների առկայությանը, ընթանում է դրամի եւ արդյունաբերության միասնության ուղով: Այս ընկերակցությունը, 1993 թ. հունվարին սկզբից միավորվելով Եվրոդական ազատ փոխանակումների մյուսյան անդամ երկրների (Իսլանդիա, Ֆինլանդիա, Շվեդիա, Նորվեգիա, Ավստրիա եւ Լիխտենշտեյն) հետ, ստեղծել է 358 միլիոն ազգաբնակչությամբ եւ 6842 միլիարդ դոլար տարեկան համախառն եկամտով մի բլոկ, որ կազմում է ամբողջ աշխարհի առեւտրի 40 տոկոսը:

3. Ասիական բեռեռ. Ճապոնիան դեռեւս դաշտոնապես ինչ-որ խմբավորում չի գլխավորում: Սակայն իր արդյունաբերական եւ ֆինանսական հզորությամբ վերջին տարիներին ասիական եւ Խաղաղ օվկիանոսի երկրների մի մեծ հաստատում իր ազդեցությունն է տարածում «նոր արդյունաբերության» տնտեսական շրջանակներում: Եւ առջեւագույն ենանդով ջանք չի խնայում, որպեսզի համաշխարհային առեւտրի կենտրոնն Ատլանտյան օկեանոսի շրջանից տեղափոխվի Խաղաղ օվկիանոսի գոտի: Ասիայի հարավարեւելյան երկրների միությունն իր հերթին 1992 թ. որոշեց Խաղաղ օվկիանոսի շրջանում ազատ առեւտրական փոխհարաբերությունների գոտի ստեղծել: Այս նոր միավորումը կոչվում է Ասիական ազատ փոխանակումների միություն: Անդամակցում են 6 երկրներ՝ Ինդոնեզիան, Մալայզիան, Սինգապուրը, Ֆիլիպինները, Թաիլանդը եւ Բրունեյը: Այս երկրները նոպատակադրվել են 1990-2008 թթ. ընթացքում, վերացնելով

digitised by A.R.A.R.@

մասային արգելքները, իրենց տնտեսական փոխհարաբերություններում ստեղծել մեծ շուկա՝ 350 միլիոն բնակչությամբ աշխարհի տնտեսական առումով ամենաակտիվ շրջանում, որը կվերածվի Հյուսիսային Ամերիկայի Մեծ շուկայի եւ Եվրոպական տնտեսական ընկերակցության համար հզոր մրցակցի:

Ազգային շուկայի անկումը

Աշխարհի տնտեսական երեք հզոր բեւեռները պատրաստվում են մեծ ընդհարումների, եւ հենց այժմ էլ նկատվում է, որ նրանց միջեւ առեւտրական փոխհարաբերություններում տեղ գտած ճգնաժամն օրըստօրե խորանում է: Իրականում տնտեսական այդ երեք հսկաները սառը պատերազմի ավարտով եւ սոցիալիզմի ճամբարի կործանմամբ փլկվեցին ընդհանուր բենամու գոյության վտանգից եւ այսօր այլեւս անհրաժեշտություն չունեն քաղաքական պատճառներից դրդված բաց թողնել իրենց ներքին հակասությունները:

Ամերիկացիներն իրենց տնտեսական խնդիրների եւ դժվարությունների համար մեղադրում են հետկապես Ճապոնիային արտաքին առեւտրի բնագավառում հավասարակշռությունը խախտելու համար: Ճապոնացիներից պահանջում են, որպեսզի իրենց երկրի դռները ավելի լայն բացեն արտասահմանյան ապրանքների առջեւ եւ կրճատեն Ամերիկա արտահանվող ապրանքների քանակը: Հակաճապոնականությունն ամերիկյան հասարակական կարծիքում ավելի մեծ տեղ է գրավում: Ամերիկյան մամուլը Տոկիոյի հետ գնացող ծրագրերի մասին գրում է, թե դրանց նպատակն իբր ԱՄՆ տնտեսական մենթնայի ջախջախումն է՝ որպես 2-րդ աշխարհամարտում իրենց կրած ռազմական պարտությունների հատուցում: Եվրոպայի եւ Ամերիկայի միջեւ տնտեսական փոխհարաբերություններում ճգնաժամի առկայությունը եւս շոշափելի է: Ամերիկացիներն այն կարծիքին են, թե Եվրոպայի տնտեսական ընկերակցությունն ասիճանաբար վերածվում է «դոնփակ ամրոցի», քանի որ այս շուկայի անդամ երկրները, խրախուսելով իրենց ներքին շուկայում առեւտրական փոխհարաբերությունները, արգելափակում են աշխարհի այլ տեղերից ներմուծվող ապրանքների եւ ծառայությունների ճանապարհը: Վերջին տարիներին Եվրոպայի տնտեսական ընկերակցության քաղաքականությունը հատկապես գյուղատնտեսական արտադրության եւ արտահանման պրոցեսում ԱՄՆ-ի ֆերմերների բիրախն է դարձել: ԱՄՆ-ը նրան ամբաստանում է այն բանում, թե հենվելով հովանավորության քաղաքականության վրա, մասնավորապես խրախուսելով արտահանությունը, զգալիորեն բարձրացնում է ԱՄՆ-ի դիրքերը աշխարհի գյուղատնտեսական շուկաներում: ԱՄՆ-ում դեմոկրատների իշխանության գալուց գալուց հետո Ատլանտիկայի երկու ափերին գտնվող հզորների միջեւ առեւտրական փոխհարաբերություններում ծագած ճգնաժամն ասիճանաբար նոր պրոցեսներ է ընդունում:

Մյուս կողմից, Եվրոպայի տնտեսական ընկերակցությունն ընդհարումների մեջ է Ճապոնիայի հետ, քանի որ արդյունաբերական որոշ ճյուղերում, այդ թվում էլեկտրոնիկայի եւ մեքենաշինության բնագավառում, Ճապոնիայի արտահանության ճնշման տակ Եվրոպան հետզհետե ծնկի է գալիս: Եվրոպական երկրները, հատկապես Ֆրանսիան, խրախուսում են խիստ եւ կարծր քաղաքականությունն ընդդեմ Ճապոնիայի, նրան համարելով իրենց արդյունաբերության աղագայի համար մեծ վտանգ: Եվրոպական երկրներն այդ նույն քաղաքականությունն են կիրառում նաեւ ասիական «արդյունաբերական նոր երկրների», մասնավորապես Հարավային Կորեայի նկատմամբ:

Նման պայմաններում միջազգային տնտեսության պատառ-պատառ լինելը բենամական «բլոկների» միջեւ ասիճանաբար միջազգային փոխհարաբերությունների ոլորտում դառնում է կարեւոր ուղղություններից մեկը: Այս իրավիճակում, երբ տնտեսական բեւեռացումները գրավում են սառը պատերազմի ժամանակվա ռազմաքաղաքական բեւեռացման տեղը, այլեւս ոչ մի երկիր չի կարող մեկուսացված աղրել: Ներքին փոքր շուկաները մեկընդմիշտ դուրս են գալիս աշխարհի տնտեսական ասպարեզից եւ այսօր տնտեսությունը ծրագրելիս չեն կարող բավարարվել ազգային սահմաններով: Զարգացող շրջաններում էլ նոր տնտեսական խմբավորումներ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԵՎԵՌՆԵՐԸ ԳՐԱՎԵԼ ԵՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԵՎԵՌՆԵՐԻ ՏԵՂԸ

Վերջին 15 տարվա ընթացքում երկկողմ կամ բազմակողմ ռազմաքաղաքական դաշինքները, որոնք ստեղծվել էին սառը պատերազմի մթնոլորտում, ասիճանաբար վերացել կամ հիմնովին փոխել են իրենց բնույթը: Իրանի Իսլամական հեղափոխության հաղթանակը 1979 թ. վերջ դրեց ՍԵՆՏՕ-ի գոյությանը: ԽՍՀՄ փլուզման եւ երկբեւեռ աշխարհակարգի վերացման հետեւանքով լուծարվեց ամենահզոր ռազմաքաղաքական միավորումներից մեկը՝ Վարշավայի պայմանագիրը: Իսկ այնուհետեւ մեկը մյուսի հետեւից պատմության գիրկն անցան նմանատիպ երկկողմ եւ բազմակողմ այլ պայմանագրեր: Թեպետ Հյուսիսատլանտյան (ՆԱՏՕ) պայմանագիրը դեռեւս գոյատեւում է, սակայն նրա բնույթը միանգամայն տարբերվում է նախկինից եւ այժմ իր գոյությունը պատճառաբանելու համար նոր նպատակներ փնտրում: Այս հարցերի մասին է Լոնդոնում հրատարակվող Իրանի ընդդիմության «Քեյհան» թերթի ստորեւ բարգմանաբար հրապարակվող հոդվածը:

են առաջանում, իսկ եղածներն սկսել են ակտիվանալ: Այս տեսակետից խոսուն օրինակ է Լատինական Ամերիկան: 1990 թ. ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշն իր հանրահայտ ուղերձով, որը ճանաչված է «Նախաձեռնություններ Ամերիկա մայրցամաքի համար» անունով, շրջանի երկրներից պահանջում է համախմբել տնտեսական միությունները: 1991 թ. Բրազիլիան, Արգենտինան, Պարագվայը եւ Ուրուգվայը մի նոր տնտեսական միություն ստեղծեցին «Մերկոսուր»: Լատինական Ամերիկայում գոյություն ունեցող նախկին միությունները, այդ թվում կենտրոնական Ամերիկայի ընդհանուր շուկան, «Անդի» պայմանագիրը եւ Ազաս փոխանակման միությունը զգալիորեն ակտիվացել են: Աֆրիկյան 1960-ական թթ. անհաջողակ միությունները, ինչպես Աֆրիկայի արեւմտյան երկրների տնտեսական ընկերակցությունը եւ Կենտրոնական Աֆրիկայի մաքսային եւ տնտեսական միությունը, ջանքեր են թափում անկումային վիճակից դուրս գալու համար:

Պարսից ծոցի ավազանում Ծոցի համագործակցության խորհուրդը նպատակ ունի հասատել արտաքին մաքսային մեկ ընդհանուր տարիֆ եւ խարհային այս մեծ գործընթացն է: Այս կազմակերպությունը, որն իր երեք հիմնադիր (Իրան, Թուրքիա, Պակիստան) անդամներից բացի, ներառել է նաեւ Միջին Ասիայի նորանկախ հանրապետությունները եւ Աֆղանստանը, իր գլխավոր նպատակն է համարում 320 միլիոնանոց «ընդհանուր շուկայի» ստեղծումը: Շրջանում տիրող իրավիճակից ելնելով, կարելի է ասել, որ այդ նպատակի իրագործումն ավելի շուտ անուրջի է նման: ECO-ի որոշ անդամներ ներքին եւ արտաքին բախումների հետ են վարվում: Իրանն արդեն մի քանի տարի տնտեսական ճգնաժամի մեջ է: Թուրքիան Եվրոպայի տնտեսական ընկերակցության անդամ դառնալու հույսեր փայփայելով, լուրջ չի վերաբերվում իր բնական եւ աշխարհագրական տարածության մեջ միավորվելուն:

Փաստորեն, ECO-ի անդամ երկրները գտնվում են ճակատագրական երկընտրանքի առջեւ, կամ պետք է տրվեն ԽՍՀՄ փլուզմանը եւ ընկղմվեն առաջացած մեծ վակուումի մեջ, կամ էլ պետք է անհրաժեշտ նախադայմաններ ստեղծեն շրջանում լայնածավալ տնտեսական համագործակցության համար:

Պատրաստեց ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆԸ

True Type & PostScript
Յուգրային տառաչափեր
տեսակները՝ Times Helvetica Folio™
ընդամենը՝ 8 տառատեսակ
կիրառությունը՝ Macintosh IBM/WINDOWS
Ամենայն մանրամասնություններ՝ հետեւյալ հասցեներով՝
Ի վերջո, դրանք գեղեցիկ են...

Տնտեսություն

ԱՄՆ-ում կրճատվել են ռազմական պատվերները

ԱՄՆ առեւտրի նախարարությունը հայտարարել է, որ այս տարվա մարտին հիմնական տնտեսական ցուցանիշների ինդեքսը նվազել է մեկ տոկոսով: Դա ամենամեծ նվազումն է վերջին ավելի քան երկու տարում: Առաջիկայում դրա նկատմամբ բաժնետոմսերի գնաճի վստահության նվազումն ա խուսափելիորեն կանդրադառնա ամբողջ ֆոնդային բորսայի վրա: Մինչեւ օրս նկատվում էր դրա ներդրում բաժնետոմսերի մեջ, որը գնումը կաղված է մեծ վտանգ հետ, բայց նաեւ շատ ավելի մեծ շահույթի հետ, քան հուսալի եւ այնքան շահավետ պարտատոմսերի գնումը: Սակայն այսօրվա դրությամբ ռիսկը գերազանցել է բնականի սահմանները, ու թեեւ ա ժեթղթերի շուկայում բաժնետոմսերին լիովին փոխարինող արժեթուղթ չկան, մարդիկ զգուշավոր է դառնում:

Բացի պարտատոմսերից, միջնորդների եւ ներդրողների ուշադրությունը բեւեռված է անշարժ կայքի շուկայի վրա, որի վաստակաբերությունը, վերլուծաբանների կարծիքով, անցել են: «Փեյն Ուեբերի» անկացած հարցումը ցույց տվեց, որ ներդրողները անշարժ կայքի գներ բուն աճ են ակնկալում տարվա կեսից ոչ ուշ եւ շտապում են կապիտալները ներդնել դեռեւս էժան բնակարաններում: Անցյալ տարվա անշարժ կայքի շուկայում ինվեստիցիոն հիմնադրամը կազմեց 338 միլիոն դոլար, իսկ այժմ այնտեղ շահաբերության մեջ է դրված արդեն 1,6 միլիարդ դոլար:

«Լոկհիդ» ընկերությունը, որ իր վրա հիվանդագին կերպով զգաց երկրի ռազմական բյուջեի եւ Պենտագոնի պատվերների թվի կրճատումը, հայտարարել է, որ մտադիր է կառուցել կարճ վառելիքային միջակ մղիչ հրթիռներ, որոնք կկարողանային օգտագործվել տարբեր խաղաղ բեռներ ուղեծիր դուրս բերելու համար: Ընկերության պատասխանատու ներկայացուցիչների խոսքերով, նոր հրթիռները կկարողանան ուղեծիր դուրս բերել 1-3,6 տոննա քաշով բեռներ: «Լոկհիդը» հույս ունի արժանանալ նախ եւ առաջ հեռահաղորդակցական ընկերությունների ուշադրությանը, որոնք տիեզերք են դուրս բերում զգալի թվով կաղի արբանյակներ: Ընկերության մասնագետների գնահատումների համաձայն, նոր հրթիռի մշակման եւ փորձարկումների համար կարող է պահանջվել մոտ երկու տարի: Առաջին ցուցադրական արձակումը նախատեսված է 1994 թ. նոյեմբերին:

«Լոկհիդը» կարճ վառելիքային արագացուցիչների ստեղծմամբ զբաղվում է 35 տարի: Նրա ձեռնարկություններում նաեւ կառուցվում են «Սթեյզ» կարճաժամկետ ռմբակոծիչներ եւ սուզանավերի «Թրայդենտ» ռազմավարական հրթիռներ: Ընկերության ղեկավարության խոսքերով, այն դարձյալ կկոչվի հիմնականում դեռեւ Պենտագոնի եւ NASA-ի պատվերները:

Հյուրանոցների ցանց ունեցող երկու խոշորագույն ընկերություններ՝ «Հիլթոն հոթելզը» եւ «Մարիոտը» հայտարարել են, որ իրենց եկամուտները ավելացել են 1992 թ. եւ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում: «Մարիոտի» դրամաշրջանառությունը 1,95-ից հասել է 2,08 միլիարդ դոլարի, բայց արդեն զուտ շահույթը կազմել է 49 միլիոն դոլար: «Հիլթոն հոթելզի» շահույթն առաջին եռամսյակում կազմել է 231 միլիոն դոլար: Այդ երկու ընկերությունների բաժնետոմսերի գները ԱՄՆ-ի ֆոնդային բորսաներում բարձրացել են:

ԱՐՄԵՆ ԹԱՍ-ԻՏԱՆ-ՏԱՍ

հավատացել էր «տնտեսությունը թափ տալու» նոր նախագահի խոստումներին: Բայց փետրվարից սկսած արդեն երրորդ անընդմեջ ամիսն է, ինչ ինդեքսը նվազում է: Բաժնետոմսերի նկատմամբ ներդրումների վստահության նվազումն ա խուսափելիորեն կանդրադառնա ամբողջ ֆոնդային բորսայի վրա: Մինչեւ օրս նկատվում էր դրա ներդրում բաժնետոմսերի մեջ, որի գնումը կաղված է մեծ վտանգի հետ, բայց նաեւ շատ ավելի մեծ շահույթի հետ, քան հուսալի եւ այնքան շահավետ պարտատոմսերի գնումը: Սակայն այսօրվա դրությամբ ռիսկը գերազանցել է բնականի սահմանները, ու թեեւ ա ժեթղթերի շուկայում բաժնետոմսերին լիովին փոխարինող արժեթուղթ չկան, մարդիկ զգուշավոր է դառնում:

Բացի պարտատոմսերից, միջնորդների եւ ներդրողների ուշադրությունը բեւեռված է անշարժ կայքի շուկայի վրա, որի վաստակաբերությունը, վերլուծաբանների կարծիքով, անցել են: «Փեյն Ուեբերի» անցկացրած հարցումը ցույց տվեց, որ ներդրողները անշարժ կայքի գներ բուն աճ են ակնկալում տարվա կեսից ոչ ուշ եւ շտապում են կապիտալները ներդնել դեռեւս էժան բնակարաններում: Անցյալ տարվա

թյան մասին: Սպիտակ տան մամուլի քարտուղար Դ. Դ. Մայերսը մասնավորապես ընդգծեց, որ երկու հիմնական գործոններ են ազդել ինդեքսի նվազման վրա: Դրանք են «համաշխարհային ճահանչը», ինչպես նաեւ «վերջին 12 տարում նոր աշխատատեղերի ստեղծման գործում դրամ ներդնելու կառավարության փորձերի ձախողումը»: Սակայն շատ տնտեսագետներ կարծում են, որ ինդեքսի նվազումը վաղվա օրվա հանդեպ մասնավոր ձեռնարկատերերի եւ շարքային քաղաքացիների անվստահության վկայությունն է: Ըստ որում, այդ վստահությունը պայմանավորված է Քլինթոնի վարչակազմի տնտեսական նախագծերով, որոնցով նախատեսվում է հարկերի զգալի բարձրացում:

Նյու Յորքի «Փեյն Ուեբեր» ինվեստիցիոն ֆիրման, որը Ուոլ սթրիթում 5-րդ տեղն է զբաղեցնում արժեթղթերի առեւտրով զբաղվող ընկերությունների մեջ, աղրիլին իր 5000 հաճախորդների շրջանում հարցում է անցկացրել, որի արդյունքների հիման վրա հայտարարել է, որ ամերիկացի ներդրողների շրջանակներում նախագահ Քլինթոնի եւ նրա տնտեսական քաղաքականության հանդեպ վստահությունն անշեղորեն նվազում է: Այստեղից «Փեյն Ուեբերի» վերլուծաբանները հետեւություն են արել, որ առաջիկա երկու-երեք ամսում տարեկզքի համեմատությամբ բաժնետոմսերի առեւտուրը կդանդաղի: Դրանն սկսում է հոսել պարտատոմսերի շուկա, որը կառիստների տեղաբաշխման դակաս վտանգալի որոշ է: Ինչպես ընդգծեց ֆիրմայի միջնորդական բաժանմունքի դեկավար Ջո Գրեենն, «Քլինթոնի նախագահ ընտրվելու հետ կապված հրճվանքը ի չիք է դառնում»:

Ֆիրմայի մշակած «ներդրողի վստահության ինդեքսը» հաշվի է առնում Ուոլ սթրիթում ներդրողների ակնկալիքներն արժեզրկման աճի, բանկային վարկերի կոդարների տատանման առնչությամբ, ինչպես նաեւ բուսական հեռանկարները եւ անշարժ կայքի շուկայի միտումները: 1985 թ. ինդեքսը կազմում էր 100 կետ: Անցյալ տարվա նոյեմբերին այն 77,5 կետ բավական բարձր նշագծին հասավ այն պատճառով, որ Ուոլ սթրիթը այնուամենայնիվ

digitised by A.R.A.R.@

ԱՄԵՆ

ԲԻԼ ՔԼԻՆԹՈՆԻ ԱՆՀԱՋՈՂ ՄԵԿՆԱՐԿԸ

Քլինթոնը, որն ուզում էր նմանվել Ռուզվելտին, իշխանության 100 օրից հետո հայտնվել է Քարտերի վիճակում: Ցանկանալով ամեն ինչ կարգավորել միաժամանակ, նա առայժմ չի կատարել իր խոստումներից ոչ մեկը: -

Սոլիտակ տանը իր նախագահական ժամկետի առաջին 100 օրվա համար Բիլ Քլինթոնը փորձել էր ընդօրինակել Ֆրանկլին Ռուզվելտին: Վերջինս 60 տարի առաջ իշխանության գլուխ անցնելով Ամերիկան իրեն էր ենթարկել արագ եւ արդյունավետ գործողությունների շնորհիվ: Մեծ լճացման ամենավատ ժամանակաշրջանում նա կարողացել էր ընդամենը երեք ամսում երկիրը դուրս բերել վերելքի ճանապարհ: Դրանից հետո ԱՄՆ-ում կառավարությունը երբեք նման աջակցություն չէր վայելել:

Անցյալ տարվա ամռանը, նախագահական արշավի ժամանակ Բիլ Քլինթոնը խոստացավ «բուռն գործողությունների 100 օր, որը կդառնա արդի պատմության ամենաարգասավոր ժամանակաշրջանը»: Իրեն Ռուզվելտի հետ համեմատելուց հետո այժմ Քլինթոնը պետք է խոսի իրական արդյունքների մասին: Թեկնածու Քլինթոնի 218 խոստումներից ոչ մեկը դեռ չի իրագործվել: Դրանց մի մասը նույնիսկ մոռացության է մատնվել:

Ամերիկյան միջին դասակարգին խոստացված հարկերի կրճատումը վերածվել է նոր հարկերի ստեղծման: Հայիրցի փախստականների համար խոստացված սահմանների բացումը փոխարինվել է ծովային շրջափակման խոստացմամբ: Բանակում միասեռամոլների վրա եղած արգելքի վերացումը քողնվել է ավելի լավ օրերի: Քլինթոնի վարչակազմը սկսնակի սխալներ է թույլ տվել: Խորհրդարանականներին սիրաշահելու փոխարեն Սոլիտակ տան երիտասարդ «հուսարները» կոնգրեսում իրենց պահեցին երկիր նվաճողների պես: Դրա հետեւանքով 43 հանրապետական սենատորներն արդեն ականատարել են 16,5 միլիարդ դոլլարանոց տնտեսական վերելքի այն ծրագիրը, որով Բիլ Քլինթոնը հույս ուներ մեկ տարում ստեղծել 500 հազար աշխատատեղ: Խոստանալով ծախսերը նվազեցնելու միջոցով կրճատել դաշնակցային բյուջեի վիթխարի դակասորդը, նոր կառավարությունն իրականում առաջ քաշեց ավելացված արժեքի հարկի եւ էներգետիկ հարկերի նոր նախագիծ: Նախագահն առողջապահության համակարգի բարեփոխման նախագծի կազմումը հանձնարարել էր կնոջը՝ Հիլարիին, որը հոր հիվանդության պատճառով չկարողացավ ժամանակին ավարտել այն: Այս բոլոր անհաջողություններն անկախ չմնացին: Երբ 100 օրվա ժամկետը մոտենում էր ավարտին, Բիլ Քլինթոնն սկսեց ավելի հաճախակի հրապարակային ելույթներ ունենալ, որպեսզի մեղմացնի զանգվածային լրատվության միջոցների եւ մասնավորապես մամուլի քննադատությունները: Բայց իզուր: Լրագրերը, հանդեսները եւ հեռուստաձրագրերը դատապարտեցին կառավարության «ուղղությունից զերծ գործունեությունը» («Նյուզուիք») եւ «ինտրիգիայի կորուստը» («Թայմ»), որը փորձում է «օդապարանով բռնել լուսինը» («Նյու Յորք թայմզ»):



Երկրում հիասթափությունն ու հոռետեսությունը հաջորդել են Քլինթոնի ընտրությանն անմիջապես հաջորդած հրճվանքին: Հանրային կարծիքի հարցումների համաձայն, նոր նախագահի ժողովրդականությունն իջել է 50 տոկոսի նշագծից: Եռամսյա իշխանությունից հետո ԱՄՆ-ում որեւէ-մեկի ժողովրդականությունն այդքան չէր նվազել: Ռուզվելտի փառավոր օրինակին հետեւելու փոխարեն Քլինթոնն ավելի շուտ սկսել է նմանվել Ջիմի Քարտերին: Իրոք, իր նախորդ երկու դեմոկրատների նման Սոլիտակ տան նոր տերը ցանկացավ անմիջապես ամեն ինչ փոխել: Բայց ի տարբերություն Ռուզվելտի, որը կարողացել էր իր կամքը պարտադրել Կոնգրեսին, Քլինթոնն արագորեն Քարտերի բուլությունը դրսեւորեց խորհրդարանային իշխանության հանդեպ: Ինչպես նշում է ամերիկացի քաղաքագետներից մեկը, «Կոնգրեսում դեմոկրատները հարգում են Քլինթոնին, բայց չեն վախենում նրանից: Մինչդեռ Վաշինգտոնում առանց վախի ոչինչ չի արվում»:

Երբ օրենսդիրները ծափահարություններով ընդունեցին հաջորդ տարվա համար նախագահի ներկայացրած բյուջեի նախագիծը, նա դա ընկալեց որպես քաղաքական մեծ հաղթանակ: Բայց որոշ ժամանակ անց բյուջեի տեսքն Լեոն Պանետան հասկացավ, որ խորհրդարանականներն ուզում են պատառ-պատառ անել իր նախագիծը: «Մեր հիմնական նախաձեռնություններից յուրաքանչյուրը բանակցություններ առարկա է դառնում ընդդիմության հետ, չնայած տեսականորեն մենք մեծամասնություն ենք կազմում զույգ պալատներում», ասում է Լեոն Պանետան: Իրոք, իշխանության երկու ճյուղերում դեմոկրատների գերակշռությունը իսկապես բարեբախտություն չի երաշխավորում, քանզի վերջին երեսուն տարիների հիմնական մասը անցկացրած լինելով Սոլիտակ տան հանրապետականների դեմ պայքարելով, դեմոկրատ խորհրդարանականները վարժվել են իրենց մեծ անկախությանը:

Նախագահության հենց առաջին շաբաթվանից Բիլ Քլինթոնն ստիպված եղավ զիջումներ անել Կոնգրեսի ղեկավարներին: Ազդեցիկ դեմոկրատ սենատոր Սեմ Նանի ճնշմամբ Սոլիտակ տունն ստիպված եղավ հետաձգել բանակում միասեռամոլների գործի քննությունը: «Ես նախագահին երբեք իմ տերը չեմ համարել», մեկնաբանեց Ջորջիայի ներկայացուցիչ Սեմ Նանը: Շատ ուրիշ վիճելի նախագծերի առթիվ եւս Քլինթոնը կարող է բախվել ժողովրդի ընտրյալների դիմադրությանը, որոնք իրենց սեփական ընտրական հոգսերն ունեն: Երկու տարին մեկ նորացվող ներկայացուցիչների պալատը մշտական ընտրարշավի մեջ է: Սենատում, որը մեկ երրորդով նորացվելու է եկող տարի, դեմոկրատներն ունեն միայն 7 տեղի առավելություն: Ուստի Կոնգրեսը շատ զգայուն է Բիլ Քլինթոնի ներկայացրած հարկային նոր նախագծերի նկատմամբ:

Այս ամենին գումարվում է Ռոս Պերոյի բափառող ուրվականը: Տեխասցի «խառնակիչ» միլիարդատերն իր ստացած 19 միլիոն քվեներով դեռեւս կարող է զգալի կշիռ ունենալ առաջիկա ընտրություններում:

Սակայն Բիլ Քլինթոնն իր ներկայիս դժվարությունները չի կարող վերագրել միայն բենամիներին: Կառավարման անձնական ոճի պատճառով (չափից շատ աշխատանք եւ մանրամասնությունների շեշտադրում) նա արագորեն տեսադաշտից բաց թողեց հիմնական խնդիրը: «Նա պետք է հստակորեն սահմանի իր գերակայությունները եւ ջանա իր կողմը թեքել հանրային կարծիքը», ասում է նախագահի խորհրդականներից մեկը: Փոփոխության կոչ անելուց հետո Քլինթոնը ստիպված է համբերատարության ջատագով դառնալ: «Իմ ժամկետը չորս տարի է եւ ոչ-թե երեք ամիս, օրերս ասաց նոր նախագահը, եւ իմ բոլոր խոստումներն ասիճանաբար իրագործվում են»: Նախագծերը հավակնոտ են բոլոր բնագավառներում (կրթություն, շրջակա միջավայր, առողջապահության հասանելիություն, սոցիալական օգնություն, բարոյագիտական բարեփոխումներ) եւ պետք է բավարարեն ամենաղաղահանջկոտներին: Միջազգային առումով Արեւելքասի նախկին նահանգապետը բավական հաջող է սկսել: Վանկուվերում Բորիս Ելցինի հետ հանդիպման ժամանակ նա իրեն դրսեւորեց որպես լավ դիվանագետ եւ Ջորջ Բուշի հետեւորդ: Բոսնիայի ճգնաժամի հարցում նա ցույց տվեց, որ կարող է հակադիր ճնշումներին դիմակայել եւ իրեն իրավունք վերապահել գործելու համար պահին:

Բազմաթիվ ամերիկացիներ սկսել են կասկածանքով վերաբերվել նախագահական պարակականությունները հաջող կատարելու Քլինթոնի ունակությանը: Սակայն 100 օրվա արդյունքների հիման վրա դատելը անարդարացի կլիներ: Մանավանդ եթե նկատի ունենանք, որ Քլինթոնն ընդունակ է «ցատկերի»: Իսկ առայժմ նրա գործած սխալները չի կարելի ճակատագրական համարել:

Le Point, 7 մայիս 1993

Աշխարհ Հոսք

Մեծ Բրիտանիա. անհանգստություն Սիքիում

Լոնդոնի գործարար շրջանում՝ Սիքիում, մարդիկ տարտափահար են: Անգլիական կապիտալիզմի սրբարանում ապրիլի 24-ին հուժկու ռումբ պայթեցնելով, Իռլանդիայի հանրապետական բանակը (ԻՀԲ) կարծես թե ի վերջո գտել է Ալբիոնի թույլ կետը: Մեկ սպանված եւ 47 վիրավոր, 300-500 միլիոն ֆունտ ստեռլինգի վնաս, հիսելրյան կայծակնային պատերազմը հիշեցնող ամայացում, առավելագույն հնչեղություն այն պատճառով, որ պայթյունը տեղի ունեցավ Վերականգնման եւ զարգացման եվրոպական բանկի ամենամյա ընդհանուր ժողովի վայրից ընդամենը 400 մետրի վրա: Եվրոպայի առաջին ֆինանսական կենտրոնի դեմ ձեռնարկված այդ տպավորիչ գործողությունը, որտեղ առկա է աշխարհի առեւտրական հաստատությունների եւ բանկերի ամենամեծ կուտակումը, ահաբեկիչներին թույլ տվեց վերականգնել գրեթե կորցրած իրենց զորությունը: «Կյանքը Սիքիում շարունակվում է», թեեւ Ջոն Մեյջորը ձեւացնում է, թե այնքան էլ չի ազդվել այդ գործողությունից, նա չի կարող լիովին անտեսել Բրիտանիայի տնտեսական զորության խորհրդանիշին նետված այդ արյունալի մարտահրավերը: Նա չի կարող այս պայթյունը ընկալել տիրակալի այն անտարբերությամբ, որին արժանացրել էր ամիսներ շարունակ Լոնդոնի երկաթուղու եւ մետրոյի կայարաններում, մեծ խանութներում կատարված ահաբեկչական քայլերը: Այս անգամ Եվրոպայում Սիքիի ֆինանսական առաջնությունն է, որ հարցականի տակ է դրվում: Արդեն ոմանք սպառնում են իրենց գործունեության կենտրոնը փոխադրել առավել վստահելի վայր (Ֆրանկֆուրտ կամ Փարիզ), եթե անվտանգությունն ավելի լավ չապահովվի: Թագավորական գանձարանը այս սպառնալիքը շատ լուրջ է ընկալում, քանզի բարգավաճ Սիքին մատակարարում է ազգային համախառն արտադրանքի ավելի քան 17 տոկոսը եւ տարադրամի շահույթի պատկառելի մասը, որոնք կազմում են թագավորության այսպես կոչված «անտեսանելի եկամուտները»:

Աֆղանստան. խաբխաբի պատերազմ

Խաբխաբի պատերազմը տեղի կունենա՞: Աֆղանական պատերազմի պարագլուխները, որոնք նաեւ թմրադեղերի առեւտրի պարագլուխներն են, երկրի սահմանում ծերբակալել են հակաթմրադեղային պայքարի ներկայացուցիչների: Թմրադեղերի հարցերի մասնագետ երեք դիվանագետներ (մեկ բրիտանացի, մեկ գերմանացի եւ մեկ հոլանդացի) զինված խմբի կողմից առեւանգվել են երկրի հարավում գտնվող Սոին Բալդակ քաղաքի մոտ: Աֆղան մուջահեդները փորձում են նրանց փոխանակել թմրադեղերի ծերբակալված առեւտրականների հետ: Այս ծերբակալությունը իրականում ցույց է տալիս խաբխաբի մատակարարների հարաճուն ակտիվությունը: Այդ բույսը ծառայում է հերոինի պատրաստմանը: Թեհրանը, որը խստորեն պատժում է թմրադեղերի առեւտուրը, իր հերթին հայտնել է, որ հակաթմրադեղային գործողությանը մասնակցող իրանցի 50 զինվորներ գերի են վերցվել աֆղան առեւտրականների կողմից: Խորհրդային 10-ամյա ներխուժումից հետո ավերակ դարձած, եղբայրասպան պատերազմի մեջ հայտնված Աֆղանստանը, ըստ ԱՄՆ վարչակազմի տվյալների, ներկայումս դառնում է աշխարհի ափիոն արտադրող առաջին երկիրը, առաջ անցնելով Ոսկյա եռանկյունու (Հնդկաչին) երկրներից: Սա անլուծելի հարց է Արեւմուտքի հակաթմրադեղային ծառայությունների համար, քանզի հարեւան Պակիստանը ամեն կերպ դյուրացնում է աֆղան մատակարարների գործունեությունը: Բացի դրանից, թմրադեղերի առեւտրի պարագլուխները ներկա-են խորհրդարանում եւ օգտվում են խորհրդարանային անձեռնմխելիությունից: ԿԳՎ-ի զեկուցագրերից մեկում նախկին վարչապետ Նավազ Շարիֆի անձնագ Սոհայլ Ջիա Բուտը նույնիսկ մեղադրվում է թմրադեղերի գաղտնի առեւտրին մեղսակից լինելու համար: Նույն զեկուցագրի համաձայն, կասկածներից զերծ չեն նաեւ Պակիստանի գաղտնի ծառայությունները: ■

Դարձեալ Հոսք

Ասիայի երկրների • էներգետիկ դժվարությունները

Ասիա-խաղաղօվկիանոսյան շրջանի բազմաթիվ զարգացող երկրներ այս կամ այն աստիճանի տնտեսական ճգնաժամ են ապրում: Ֆիլիպիններում արդեն սովորական է դարձել օրական 8 ժամով էլեկտրականության անջատումը: Էլեկտրաէներգիայի պակասն այդ երկրի տնտեսական ճգնաժամի գլխավոր պատճառն է: Մալայզիան նույնպես էներգաղաբարների պակաս է զգում, որը բացասաբար է անդրադառնում վերամշակման արդյունաբերության վրա: Նավթ արդյունահանող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ինդոնեզիան, Չինաստանը, Վիետնամը, դժվարություններ ունեն էներգիայի հարաճուն պահանջարկի բավարարման հարցում:

«Սբրեյթզ թայմզ» թերթի վկայությամբ, էներգետիկ դժվարությունները խորանում են այն պատճառով, որ ըստ մասնագետների կանխատեսումների, 90-ական թվականների կեսերին նավթի արտադրության նվազում է սպասվում նավթ արդյունահանող երեք հիմնական երկրներում՝ Ինդոնեզիայում, Չինաստանում եւ Մալայզիայում: Այդ պետությունների արտահանական հնարավորությունները նույնպես կրճատվում են: Ներկայումս Չինաստանը, Ինդոնեզիան, Վիետնամը եւ Մալայզիան փորձում են նավթի արտադրությունը խթանել ներքին էներգետիկ շուկաների ազատականացման հաշվին: Նոր հանքավայրերի մշակման իրավունքներ են տրվում օտարերկրյա ընկերություններին, իսկ հանույթի պայմանները զգալիորեն մեղմացվում են:

Սակայն զարգացած պետությունների կարգավիճակ ստանալու եւ բնակչության կենսապայմանները բարելավելու Ասիայի զարգացող շատ երկրների ձգտումը չի նպաստում վառելիքի սպառման ներկայիս տեմպերի դանդաղեցմանը, ընդգծում է «Սբրեյթզ թայմզը»: Թերթի կարծիքով, միակ ելքը կարող է դառնալ զարգացող երկրների անցումը նոր, էկոլոգիապես մաքուր էներգետիկ տեխնոլոգիաների: Նավթի ու գազի ժամանակակից սարքավորումների ասիական շուկան այժմ գնահատվում է 250 միլիարդ ամերիկյան դոլլար, կազմելով համաշխարհային շուկայի մեկ քառորդը: Սակայն Ասիայի զարգացող բազմաթիվ երկրներում միջոցների պակասը դժվարացնում է նրանց անցումը նոր տեխնոլոգիաների:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌՏԱՍՍ

Տնտեսություն

Օտարերկրյա ներդրումներ ԱՊՀ-ում

Առաջիկա տասնամյակներին օտարերկրյա ներդրողները կարող են ԱՊՀ պետություններում նավթի, գազի եւ մյուս օգտակար հանածոների հանույթի բնագավառում ներդնել 85 միլիարդ դոլլար, հաղորդել է Ֆրանս պրես գործակալությունը՝ վկայակոչելով ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովը:

Դա կրկնակի գերազանցում է մինչեւ 1992 թ. վերջը ԱՊՀ արդյունաբերության տարբեր ճյուղերում կատարված օտարերկրյա բոլոր երկարաժամկետ ներդրումների գումարը: Ինչպես ակնկալվում է, ԱՊՀ պետություններին 85 միլիարդ դոլլար կհատկացվի 1990 թ. մինչեւ 1993 թ. առաջին եռամսյակն ընկած ժամանակամիջոցում ստորագրված պայմանագրերի հիման վրա: Այս հաշվարկը հիմնված է 30 նախագծերի վրա, որոնցից 22-ն ընկնում են Ռուսաստանին, իսկ մնացած 8-ը՝ Ղազախստանին: 39 նախագծից 24-ը ստորագրել են ամերիկյան խոշոր ընկերությունները եւ Մեծ Բրիտանիայի բազմազգ ընկերությունները:

Դրամը ԱՊՀ-ում բերեց ներդրվի առաջիկա տասնամյակների ընթացքում այն բանի համեմատ, երբ կիրականացվեն նոր նախագծեր եւ կհայտնաբերվեն օգտակար հանածոների նոր հանքավայրեր:

Առաջիկա չորս տարում նախատեսվում է ԱՊՀ-ին հատկացնել 10 միլիարդ դոլլար:

Ամենախոշոր պայմանագիրն ստորագրել են «Բրիթիշ գես» ընկերությունը, իտալական «Աջիպ» ընկերությունը եւ Ղազախստանի կառավարությունը: Դրա համաձայն, հաջորդ տասնամյակում Ղազախստանի տնտեսության մեջ կներդրվի 6 միլիարդ դոլլար, իսկ մնացած 20 միլիարդը կհատկացվի մինչեւ հաջորդ չորս տասնամյակների վերջը:

Հանձնաժողովի զեկուցագրում նշվում է, որ մեծ հնարավորություններ են ստեղծվում օգտակար հանածոների, այդ թվում ոսկու, դրնձի, ածխի եւ ալյումինի մշակվող հանքավայրերում կապիտալների ներդրման համար:

1992 թ. Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրներում օտարերկրյա երկարաժամկետ ներդրումների ընդհանուր գումարն աճեց երկու անգամ, մինչդեռ ԱՊՀ պետություններում կապիտալ ներդրումներն ավելացան երեք անգամ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌՏԱՍՍ

digitised by A.R.A.R.@

Իրաքի Հոգ

Իրաքցի գնդապետն ընդդեմ Ջ. Բուշի

Ինչպես Վաշինգտոնի լավատեղյակ աղբյուրները վկայակոչելով հաղորդում է «Վաշինգտոն պոստը», ԱՄՆ-ի վարչակազմի տրամադրության տակ հայտնվել են տվյալներ, որոնք վկայում են, որ Իրաքը մեղսակից է ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջ. Բուշի սպանության փորձին: Թերթը մասնավորապես գրում է. «Երբ շաբաթ առաջ Ջ. Բուշը տիկնոջ հետ Քուվեյթում էր Պարսից ծոցի պատերազմում դաշնակից զորքերի հաղթանակի երկրորդ տարեդարձի առթիվ: Բուշի այցի ընթացքում Քուվեյթի հատուկ ծառայությունները ձերբակալեցին 16 մարդու, այդ թվում 11 իրաքցիների, որոնք նրանց տվյալների համաձայն, երբեմն անգամ փորձել էին մահափորձ կատարել ԱՄՆ նախկին նախագահի վրա: Վերջին օրերին ԱՄՆ վարչակազմում հայտնվեցին նոր տեղեկություններ, որոնք առավել հիմնավոր են դարձնում քուվեյթյան կողմի պնդումները: Մասնավորապես դավադիրների խմբի ղեկավար Ռահադ Ասադին հարցաքննություններից մեկի ժամանակ խոստովանել է, որ ինքն իրաքյան հետախուզության գնդապետ է: Վաշինգտոնի աղբյուրներն ընդգծում են, որ վերջին օրերին ստացված տեղեկությունները պաշտոնապես չեն համարվում Ջ. Բուշի վրա մահափորձի մեջ Իրաքի մեղսակցության բացարձակապես անհերքելի ապացույց»: Սպիտան տան պաշտոնական ներկայացուցիչ Ջ. Ստեֆանոպուլոսը հայտարարել է, որ վարչակազմը շատ լրջորեն է վերաբերվում Բաղդադի մեղսակցությանը վերաբերող պնդումներին: «Եթե մենք պարզենք, որ Իրաքը պետական ահաբեկչության հաղախականություն է վարում, ապա ԱՄՆ-ը համապատասխան գործողություններ կձեռնարկի Բաղդադի նկատմամբ», ընդգծել է Ջ. Ստեֆանոպուլոսը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ

Ուկրաինան «նեղացել է» Արևմուտքից

Ուկրաինային նվիրված խմբագրական հոդվածում բրիտանական «Թայմզը» մասնավորապես գրում է. «Բոլոր նախկին խորհրդային հանրապետությունները չէ, որ բարեփոխումներն անցկացնում են այնպիսի համարձակությամբ, ինչպես Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինը: Ուկրաինան դարձյալ գերի է մնում նախկին կարգերին: Ուկրաինայի խորհրդարանում պահպանողական մեծամասնությունը կասկածանքով է վերաբերվում իսկական շուկայական բարեփոխումներին: Մի ամբողջ շարք հարցերի գծով Ուկրաինան շրջափակել է այն համաձայնությունները, որոնք նախընտրում է ինչպես Արևմուտքը, այնպես էլ Ռուսաստանը: Ուկրաինան արևմտյան երկրների հետ լարված հարաբերությունների մեջ է եւ զայրացած է այն բանից, որ իրեն չի հաջողվել արժանանալ այնպիսի ուշադրության եւ հարգանքի, որոնց արժանի է ինքը: Կիեւն իրեն ճնշված է զգում Մոսկվայի հետ Արեւմուտքի սերտ հարաբերությունների եւ աշխարհում Ռուսաստանին հասկացվող դերի պատճառով»: Կիեւից տված հակիրճ հաղորդման մեջ «Վաշինգտոն պոստը» հաղորդում է, որ ԱՄՆ դեսպան Ս. Թելբոտը Ուկրաինայի մայրաքաղաք է ժամանել բարձրաստիճան պաշտոնական անձանց հետ բանակցելու: Վերջին ամիսներին, նշվում է հաղորդման մեջ, Միացյալ Նահանգները ճնշում էր գործադրում Ուկրաինայի վրա, որպեսզի նա կատարի միջուկազերծ պետություն դառնալու իր խոստումը: Ինչպես ասաց Ս. Թելբոտը, Վաշինգտոնն ակնկալում է, որ Ուկրաինան հավատարիմ կլինի միջուկային սպառազինությունների կրճատման բնագավառի իր պարտավորություններին:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ

Աճը դանդաղել է, սակայն...

Համաշխարհային բանկի հետազոտության համաձայն, երրորդ աշխարհի երկրներում (մանավանդ Լատինական Ամերիկայում եւ Հարավարեւելյան Ասիայում) ծնունդը նվազել է 30 տոկոսով: Սակայն դա չի խանգարի, որ մինչեւ 2020 թ. այդ երկրների բնակչությունը կրկնապատկվի:

Մտածելու

Եւ սայլը տեղից կշարժվի

Այսօր մարդիկ հավատում են ավելի, քան երբեւէ: Ինչո՞ւ: Երեւի հույսն են կորցրել:

Առանց մտածելու միտս կրկնել եմ, թե վերկությունը հույս, հավատ, սերն է: Այս երեք հզոր ուժերը միասին ու միաժամանակ: Հույս, հավատ, սերն էլ կարծես կարապը, խեցգետինն ու գայլածուկը լինեն: Մի կերդ դահիճանում եմ հավատը, երբ լույսի շող անգամ չի երեւում, գտնում եմ սերը, ու կարծես հույսն էլ է բացվում, բայց մեկ էլ տեսար հավատն եմ կորցնում:

Չեմ նկատում, թե մեր բառապաշարում ինչքան են շատացել վատ իմաստով բառեր՝ փչացավ, խանգարվեց, կոտրվեց, շտապվեց, չհաջողվեց, հիվանդացավ, տաղալվեց եւ այլն...

Էս անլույս ու անհույս կյանքում մեր կողքին ապրում է նաեւ դերասանը՝ արհիստը: Ու երբ շատ շատերի կյանքը, խնդիրները, արածն ու մանավանդ չարածը ոչ մեկի հոգը չեն, ապա դերասանը, մտածում եմ, ինչո՞ւ է լռել, ինչո՞ւ չի աշխատում, առանց հաշիվ տալու, որ նույն անլուծելի խնդիրները նրա բեռանն ու ձեռքերն էլ են կապել, որ նրա համար էլ է դժվար եւ նույնիսկ ավելի դժվար, քանի որ էս կյանքում մի ուրիշ կյանք պիտի ստեղծի: Ինչպե՞ս, ինչո՞վ, ո՞ւմ հետ, ո՞ւմ համար եւ նման հարցերի երկար շարան, որոնց պատասխանը դժվար թե գտնեմ:

Բայց դերասանը, նկատի ունեմ արհիստը, երեխա է եւ առանց լույսի ու հույսի հավատում է, լուռ ու մունջ տանում իր խաչը, մինչեւ կբացվի հույսը, ու նաեւ կտան մի քիչ լույս, ու կծնվի սերը:

Լավ չեմ հիշում, բայց երեւի շուրջ հինգ տարի է, ինչ բոլորին մտահոգում է պետական, մայր թատրոնի վիճակը: Ի՞նչ եղավ: Մայր թատրոնի շենքը՝ վիրխարի սրահով ու բեմով, լայն միջանցքներով ու շատ հարդարասենյակներով մնաց Խորհնին ու դեռ հեռն էլ կողքի շենքը՝ այսպես կոչված Թատերական գործիչների միությունը:

Մեր մի քանի համախոհներ հետ տեղավորվեց Մայր թատրոնից ոչ շատ հեռու փոքրիկ մի շենքում, իսկ Սոսը՝ իր համախոհների հետ Գրողների միությունում: Մայր թատրոնի շենքը փոքր թվաց երեք հսկաներին եւ, ի վերջո, այդ հսկա շենքի մնաց այս երեքից միայն մի հսկային:

Կարապը, խեցգետինը եւ գայլածուկը:

Հեռացան ժողովրդի սիրելի երկու արհիստները Մայր թատրոնի շենքից՝ իրենց հետ տանելով իրենց Մայր թատրոնը. նրա ավանդներն ու իրենց համախոհներին: Պետական շենքում էլ մնացին շատերը, հուսանք, որ համախոհները:

Հետո եկան սպասումի տանջալից տարիներ, եւ վատ իմաստով բառեր գործածելու սովոր մարդիկ ասացին՝ պարզապես էլ չեն կարող ստեղծագործել, աշխատել, սպառվել են, ասելիք չունեն, մեկի մասին, թե՝ հարբում է, մյուսի՝ խառնվել է քաղաքական պայքարին, երեկ ինքն էր ասում, թե միայնաց պարոն ասեմ, այսօր ինքն է ընկեր դարձել եւ մասնակցում է նախագահական մրցարշավին, դերասանն՝ ի՞նչ նախագահ: Ինչեւէ:

Թատրոնը մարդ չի, որ ձեւավորվի ու ծնվի ընդամենը ինն ամսում: Թատրոնն ինքը կյանքն է:

Սպասումի տարիներն իրենց արդյունքը տվեցին, ու անցյալ ամառ բացվեց Մհերի «Արհիստականը», եւ այս գարուն Սոսի «Համազգայինի» թատրոնը, ի դեղ, ոչ թե համազգային, ինչպես չարախոսում էին, այլ «Համազգայինի», այն մշակութային միության, որ տասնյակ տարիներ է, ինչ գործում է սփյուռքում:

Բացվեց Սոսի թատրոնը՝ առանց թատերական ասպարեզում հեղափոխություն անելու հավակնության, պարզ ու միամիտ՝ լոռեցու պես, կարոտած հնի պես, գտարյուն թատրոնի պես ու իր՝ Սոսի ընտրած հեղինակի՝ Էդուարդո դե Ֆիլիպպոյի պես իրական, առանց ջանքեցնող էֆեկտների ու բեմադրական հնարքների, լսելի, դիտելի ու հասկանալի: Ի դեղ, հիմա ընդունված է մեր արածի ճշտությունը փաստել Արեւմուտքից եւ Մ. Նահանգներից բերված օրինակներով: Այդ առումով ասեմ, որ վերջերս առիթ եմ ունեցել երկու ներկայացում դիտելու, մեկը Լոս Անջելեսում, Օլբիի «Ո՞վ է վախենում Վիրջինիա Վուլֆից» պիեսը հանրահայտ Գլենդա Ջեքսոնով, իր իսկ՝ հեղինակի բեմադրությամբ, եւ մյուսը՝ Փարիզում, հանրահայտ Միշել Մորգանով, մի ժամանակակից ֆրանսիական պիես, վերնագիրը չեմ հիշում: Երկուսն էլ՝ արված գտարյուն թատրոնի բարի ու երանելի վերհուշով: Ուրեմն՝ միջազգային չափանիշներին մոտենալու համար բոլորովին էլ անհրաժեշտ չէ ջանալ ջանքեցնող բաներ անել: Երկրագնդի վրա ամեն տեղ թատրոնի նոպատակը մարդու արտին ու մտքին ինչ-որ բան ասելն է, հեղինակի տեսքով, դերասանի շուրթերով, նրա աչքերով ու արդումով:

Եւ այսօր Սոս Սարգսյանը, որը երբեք վերջակետ չէր դրել իր արհիստական կենսագրությանը, այլ միայն ընդմիջում է հայտարարել, դարձյալ բեմի վրա է: Բեմի վրա է դերասանը, արհիստը, քաղաքացին, իր երկրի քաղաքացին:

Էդուարդո դե Ֆիլիպպոյի պիեսը կոչվում է «Սանիտայի թաղամասը»: Դոն Անտոնիոն՝ Սոս Սարգսյանի հերոսը, քաղաքես է, այլ խոսքով, «կնհահայր», որը ձեռք է մեկնում մարդկանց, եւ պատրաստում նրանց դասը, եթե արդար են: «Խորամանկները ուտում են միամիտներին: Ես էդ միամիտների պատասխանն եմ», ասում է դոն Անտոնիոն:

18 տարեկանում նա դեմ է առել սպանելու անհրաժեշտությանը: Սրան հետեւել են քսանհարյուր երկար տարիներ, օտար աշխարհներ, ու նա վերադարձել է, հեծի՞ թվով շահել իր դասը: Հիմա 75 տարեկան է, ունի ընտանիք, փող, պատիվ, ապրում է իր օրենքներով: Ու թեեւ խղճին ծանրացած է սպանություն, բայց չի զղջում: Ճակատագիրը հերոսի առաջ է բերում սպանելու անհրաժեշտությունն իր կյանքի սկզբում եւ վերջում, ու նա կանխում է երկրորդ սպանությունն իր կյանքի գնով՝ վերցնելով իր վրա ուրիշի մեղքը եւ այդ քայլը միաժամանակ թե իր գործած մեղքի քավությունն է, թե հիսունսանալու իրավունքը: «Ես քեզ վրա եմ կրակում, դու՝ ինձ, հետո խառնվում են հայրերը, հորեղբայրները, քավորները, որդիները...», հերոսի նոպատակը հանցագործությունների այս շղթան կանխելն է:

Այսօր, երբ նորելուկ «կնհահայրերը» բազմանում են, ինչպես անձրեւից հետո սնկերը, ճիշտ ժամանակին չէ՞, արդյոք, այս դասը: Պետք չէ՞, արդյոք, որ այսօրվա «կնհահայրերը» հասկանան, թե բացի սեփական գրպանի պարունակության մեջ փոփոխություն մտցնելուց, կարելի է ինչ-որ բան փոխել նաեւ իրենց շուրջը:

Այսօր, երբ օրվա հացը դժվարությամբ ենք ճարում, եւ յուրաքանչյուր հայի համար բանկ պիտի լինի մյուս հայի արյունը, չգիտեմ ամերիկյան կինոնկարներից ազդված, թե որիշ ավելի զորեղ պատճառներից դրդված, անպատիժ գենք են գործածում:

Ցավոք, կարոտում ենք 50-ականների, 60-ականների լի խանութները, էժանությունը, մարդկությունը, իրար հյուր գնալը, կարոտում ենք, թող սարսռինակ չթվա, նույնիսկ գողերին, որ գիտեին ումից գողանալ եւ ինչու, որ իրենց օրենքներն ունեին, որ ձեռքը բարձրացնելուց առաջ մի պահ գոնե մտածում էին եւ եթե արդար չէին, ձեռքը դողում էր եւ վրիպում էին: Ի՞նչ է սա: Անցյալի վերհուշի հմա՞յքը թե՞ խաբկանք, սայթաքնվայական «էրեզ լավ էր քանց վուր էսօր» իմաստուն փիլիսոփայությո՞ւնը թե անդառնալի կորուստը:

Ներկայացումը մտածել է տալիս այս ամենի շուրջը: Նյութը արդիական է, անհրաժեշտ, պարզապես լավ հեղինակ է ու լավ պիես, իսկ լավը երբեք չի հնանում: Ուրեմն թատրոնը բացվել է հաջողված ներկայացումով: Չկա՞ն արդյոք թերություններ: Գուցե կան, անթերի ոչինչ չի լինում, թեպետ դա էլ խիստ հարաբերական է, գուցե դրանք թերություններ չե՞ն, այլ արժանիքներ, կամ գուցե բեմադրիչը հենց այդպես էլ կամեցել է: Իմ կարծիքով, ներկայացման մեջ պակաս է հումորը, հեղվել են ժանրից, բեմադրել են ոչ թե տրագիկոմեդիա, այլ դրամա: Բնավորությունները բացված են դրամայի օրենքներով, որը հակասում է այդ հեղինակին, բայց դա՝ իմ կարծիքով, իսկ այս դեպքում իմ կարծիքն այնքան էլ կարեւոր չէ: Այստեղ կարեւորը թատրոն ստեղծվելու փաստն է:

Սոս Սարգսյանի շուրջը հավաքվել են լավ մարդիկ ու լավ դերասաններ՝ Մայիս Ղարագյոզյանը, Կարեն Ջանիբեկյանը, Ինեսա Պետրոսյանը, Տիգրան Ներսիսյանը, Նելլին, Անուշը, Կարինեն, Դավիթը, Գուրգենը, Հրաչիկը, տնօրեն Տիգրան Մխիթարյանը... բոլորը:

Թատրոնը բեմադրել է նաեւ Հայկ Հակոբյանի «Լեռնային կակաչներ» քնարական պիեսը, խումբը աշխատել է ձմռանը, գրտին ու մթին, հավատալով, որ գարունը կգա:

Այո, շատ քանկ են սրանից հետո չող բուռն ծափերը բեմի վրա եղողների համար եւ սրահում եղողների համար բանկ էին արցունքով ու հույսով լեցուն աչքերը՝ բեմի վրա: Հույսով, որ նոր ծնված մանուկը պիտի ապրի: Մի քիչ խմբագրելով Սեւակին ասեմ.

Ինչքան էլ ծանր է թատրոնը ծնել,
Թատրոնը պահելը ծանր է ավելի:

Նորից սփոփված եմ հիշել ծեծված առակը: Կարապը, խեցգետինը եւ գայլածուկը: Եթե չեն կարողանում երեքը միասին սայլը տեղից շարժել, թող փորձեն տանել յուրաքանչյուրն իր բեռը, իր խաչը, եւ սայլը տեղից կշարժվի:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Դերասանուհի

ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ

Եկել է գործելու ժամանակը

Հազարավոր ֆուտբոլասերներ էին հավաքվել Աբովյանի քաղաքային մարզադաշտում, որտեղ նշանակված էր նախորդ առաջնության չեմպիոններ Երեւանի ՀՄԸՄ-ի եւ Գյումրիի «Շիրակի» հանդիպումը: Այս խաղը պետք է որոշեր, թե ով է Հայաստանի Հանրապետությունը ներկայացնելու Եվրոպական չեմպիոնների գավաթի խաղարկությունում:

Սակայն երկար սպասված այդ հանդիպումն այդպես էլ չկայացավ: Խաղադաշտում հավաքված հազարավոր մարզասերները, ինչպես նաեւ մեծաքանակ հյուրերը հուսախաբ եղան: Պարզապես Գյումրիի «Շիրակը» չժամանեց Աբովյան, վտանգելով Հայաստանի նորաստեղծ ֆուտբոլի ֆեդերացիայի հեղինակությունը:

Միջազգային կարգի մրցավար Ս. Ղազարյանը խաղադաշտ հրավիրելով ՀՄԸՄ-ին, որը, ինչ խոսք, այդ օրը վճռականությամբ էր տոգորված եւ պատրաստ էր ազնիվ մրցակցությունում վիճարկել առաջինը լինելու իրավունքը, «Շիրակի» ֆուտբոլիստներին խաղին չներկայանալու համար պարտություն գրանցեց:

Ընդհանրապես, տարօրինակ մոտեցում են ցուցաբերում այս հանդիպմանը «Շիրակ» թիմը եւ Գյումրիի մարզական ղեկավարությունը: Դարձյալ պատմությունը կրկնվում է: Ինչպես հայտնի է, Հայաստանի առաջին անկախ առաջնության հաղթողին ի հայտ բերելու համար հավատար միավորներ վաստակած Գյումրիի «Շիրակի» եւ Երեւանի ՀՄԸՄ-ի միջեւ լրացուցիչ հանդիպումը որոշվել էր անցկացնել նոյեմբերի 11-ին, Արմավիրում: Սակայն խաղը հետաձգվեց: Բանն այն է, որ «Շիրակը» նման որոշումից դժգոհ լինելով, պատշաճաբար բողոք էր ներկայացրել, չհամաձայնվելով խաղալ Արմավիրում, ընդհանրապես Արարատյան դաշտավայրում: Եվ չցանկանալով «նեղացնել» «Շիրակին» ու գյումրեցիներին, բարձր աստիճանների հրահանգով չեղյալ հայտարարվեց Հայաստանի Հանրապետության ֆուտբոլի ֆեդերացիայի որոշումը: Իսկ չեմպիոնի հարցը, որը դարձել էր «գորդյան հանգույց», քանդվեց անհապաղեղ եւ անսովոր որոշմամբ. երկու թիմերն էլ հռչակվեցին հանրապետության չեմպիոններ:

Հայաստանի անդրանիկ առաջնության ամփոփիչ աղյուսակը
1-12 տեղեր

	Մ	Խ	Հ	Ո	Պ	Գ	
1. ՀՄԸՄ	87	22	17	3	2	75-31	
2. Շիրակ	37	22	17	3	2	58-14	
3. Բանանց	36	22	17	2	3	77-26	
4. Արարատ	34	22	15	4	3	78-15	
5. Վան	23	22	11	1	10	48-53	
6. Սյունիք	19	22	8	3	11	42-47	
7. Կոտայք	17	22	7	3	12	32-45	
8. Նաիրի	17	22	6	5	11	26-52	
9. ՀՄՄ-ՖԻՄԱ	16	22	6	4	12	39-42	
10. Զվարթնոց	11	22	3	5	14	30-61	
11. Կանազ	9	22	3	3	16	29-62	
12. Կիլիկիա	8	22	3	2	17	21-107	

Նախորդ օրվա չկայացած հանդիպումը կրկին ապացուցեց, որ ֆուտբոլի ֆեդերացիան այսօր չդիտեր է թերի որոշումներ ընդունի: Քաջ գիտակցելով, որ վաղ թե ուշ այս հարցը կրկին օրակարգ կմտնի նորաստեղծ ֆեդերացիան, որն ինքնուրույն առաջին քայլերն էր անում եւ միջազգային ասպարեզ է դուրս եկել, անհրաժեշտ խստություն չցուցաբերեց:

Այսօր Հայաստանի Հանրապետության ֆուտբոլի ֆեդերացիայի գործկոմը իր արտահերթ նիստում պետք է քննարկի այդ հարցը: Թե ինչ որոշում կընդունի ֆեդերացիան, հայտնի չէ, սակայն մի բան պարզ է, որ հենց այդ որոշումից է կախված մեր նորաստեղծ ֆեդերացիայի հեղինակության եւ, ինչու չէ, նաեւ առաջայի հարցը:

Իսկ ինչ վերաբերվում է Երեւանի ՀՄԸՄ-ին, ապա նա մինչեւ վերջին պահը պատրաստ էր արժանի մրցակցություն ցուցաբերել իր մրցակցին, եւ ողջ թիմը ափսոսում է, որ երկար սպասված հանդիպումը այդպես էլ չկայացավ եւ այս տարվա աշնանը Եվրոպական գավաթների խաղարկությունում մեր հանրապետությունը կներկայացնի ամենահեղինակավոր չեմպիոնների գավաթում: Երկարամյա ընդմիջումից հետո Հայաստանը վերստին իր պատվիրակներին կգործուղի Եվրոպա:

ԱՇՈՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ամը դանդաղել է, սակայն...

Համաշխարհային բանկի հետազոտության համաձայն, երրորդ աշխարհի երկրներում (մանավանդ Լատինական Ամերիկայում եւ Հարավարեւելյան Ասիայում) ծնունդը նվազել է 30 տոկոսով: Սակայն դա չի խանգարի, որ մինչեւ 2020 թ. այդ երկրների բնակչությունը կրկնապատկվի:

digitised by A.R.A.R.@

ԱՄՈՆ ԱՆԴՐԱՍՅԱՆ ՍՊՈՒՆԴԱՐԱ

Մայիսի 9-ին Հայաստանի նախագահը եւ վարչապետը այցելեցին Հաղբատակի այգի եւ ծաղիկներ դրեցին Անհայտ զինվորի հուշարձանին:

Հանդիպում

Նախագահն ընդունեց Լուիզ Մանուկյան Սիմոնին, Գառնիկ Յագուբյանին եւ դոկտ. Միհրան Աղբաբյանին

Ինչպես Նոյյան Տապան գործակալությանը հայտնել են ՀՀ նախագահի լրատվական ծառայությունից, այսիսի 10-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ընդունեց Հայկական արեգործական Ընդհանուր Միության նախագահ մարդասիրական գործունեության հայտնի կազմակերպիչ եւ բարեւոր տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնին եւ նույն միության ամսագրի մասնաճյուղի աշխատող՝ Սիրիայում ճանաչարհաշինարարական հայտնի ձեռնարկության նախագահ եւ ազգային բարեւոր Գառնիկ Յագուբյանին, որոնք մի քանի օր է արդեն, որ ժամանել են Հայաստան:

Մայիսի 10-ին ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ընդունեց Հայաստանի Ամերիկյան համալսարանի տնօրեն, ՀԲԸՄ-ի Կենտրոնական վարչական ժողովի անդամ դոկտ. Միհրան Աղբաբյանին: ■

«Արամ Խաչատրյան» Ֆիլհարմոնիկ
մեծ համերգասրահ
6 մայիսի 1993 թ.
Հոգնահանգստյան համերգ նվիրված Մեծ բարեւոր ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ հիշատակին:
Համերգի սկիզբը ժամը 15-ին:
Մուտքն ազատ է:

OK English OK
Հրավիրում ենք հեռաֆրիր աշխատաթի Անգլերենի մասնագետների
(նաեւ լավ ուսանողների):
Ցանկալի է մինչեւ 35 տարեկան
հեռ. 27-38-64, 26-70-23, 34-79-38

«ԿԱՊՐՈԼԻՏ» ֆիրման եւ «ԲԻՈԿՈՆՎԵՐՍԻԱ» ասոցիացիան
Ջրվեժ ավանի պահեստից վաճառում են կենսահումուս:
Մեծածախ գնորդների համար սահմանված է 20 տոկոս զեղչ:
Վճարը ցանկացած ձեւով
Հեռախոսներ՝ 27-81-91, 58-04-26, 58-54-27, 56-83-31:

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԵՎ ՎՈՐԴԻ
MARKOSIAN & VORDI
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՆՔ
ՀՐԱՎԻՐՈՒՄ
ՇՐՋԻԿ ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻ
Աշխատավարձը գործարքային է, որը կկազմի ամսական 10–15 հազար ռուբլի
ԴԻՄԵՔ ՄԵԶ
Արշակունյաց 2, 1 հարկ
(«Պարբերական» հրատարակչություն)

ENTERPRISE Mercury
"Mercury enterprise"-ը
հերթական անգամ անցկացնելով ինվեստիցիոն գործընթացը, բնակչությանը հնարավորություն է ընձեռում իրենց խնայողությունները պահպանել հիպերինֆլյացիոն պրոցեսներից: Ֆիրմայի մասնագետներն այս անգամ առաջարկում են ներդրումների հետեւյալ տարբերակները.
1. Եռամսյա ավանդների դեպքում –15% ամսական, որը ժամկետի վերջում կկազմի –45%
2. Վեցամսյա ավանդների դեպքում –20% ամսական, որը ժամկետի վերջում կկազմի –120%
"Mercury enterprise"-ը
Երաշխավորում է ձեր գումարների ապահովվածությունը արժեզրկման պայմաններում ամենակայուն արտարժույթ հանդիսացող անշարժ գույքով:
Երեւան, Սայաթ-Նովայի 19, «ԱՆԻ» հյուրանոց, 6-րդ հարկ 632 եւ 634 սենյակներ ☎ 594-632 594-634
PUBLISET

KILIKIA TOUR
Դուք ուզում եք այցելել Գերմանիա՞:
«ԿԻԼԻԿԻԱ–ՏՈՒՐ» ընկերությունը տալիս է այդ հնարավորությունը:
Ընդամենը 250 $ եւ 50000 ռուբլով կպատրաստվեն Ձեր ելքի փաստաթղթերը. մինչեւ 16 տարեկան երեխաների համար անվճար:
KILIKIA TOUR
ԴԻՄԵՔ ՄԵԶ ԵՎ ՄԵԿ ԱՄՍԻՑ ԴՈՒՔ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ԵՔ:
Սայաթ-Նովայի պող. «ԱՆԻ» հյուրանոց, 7-րդ հարկ, 730 սենյակ
հեռ. 58-11-10, 59-43-70
PUBLISET

Խորհրդի Հոսք

Եթե բերքը չես հանձնել, գնա բանտ

Իրանի իշխանության բարձրագույն մարմինը՝ հեղափոխական հրամանատարության խորհուրդը որոշում է ընդունել իրենց այն ֆերմերներին դրամական խոշոր տուգանքների ենթարկելու կամ բանտարկելու մասին, որոնք չեն կարողանա բերքը հավաքել գյուղատնտեսության նախարարության սահմանած ժամկետներում: Ինչպես մայիսի 10-ին հաղորդեց սաուդյան «Աշ շարք ալ Աուսաթ» թերթը, այդ քայլի նպատակն է երաշխավորել ամբողջ բերքի մուտքը պետական պահեստներ եւ թույլ չտալ դրա վաճառքը մասնավոր ֆիրմաների միջոցով: Գյուղատնտեսության նախարարության պաշտոնյաներին իրավունք է տրված արտադրողներից տուգանք գանձել հավաքված բերքի արժեքի մինչեւ կեսի չափով, եթե սահմանված ժամկետի ավարտից 15 օր անց արտադրանքը չհանձնվի պետական պահեստներ: Տուգանք չվճարելու դեպքում ֆերմերները կարող են բանտարկվել, ըստ որում բերքի ենթադրյալ արժեքի յուրաքանչյուր 1000 դինարի դիմաց գյուղացին ինքնաբերաբար ենթարկվում է 1 ամսվա բանտարկության: ԱՄՆԵՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Զինվորներն ապաստան են խնդրում

Եմենի սահմանամերձ Մահրայի նահանգում տեղաբաշխված հայուրավոր զինվորներ վերջերս ապաստան էին գտել հարեւան Օմանի սուլթանությունում: Նրանք գանգատվում էին, թե այլեւս ոչինչ չեն ստանում, եւ խնդրում էին իրենց ծառայության ընդունել Օմանի բանակում: Բայց Եմենի հետ հարաբերությունները չվատացնելու համար սուլթան Քաբուսն այդ զինվորներին վերադարձրեց հայրենիք:

ԱՄՆ-Ուկրաինա հարաբերությունները բարելավելու փորձ

Կիեւ ժամանած ամերիկացի բանագնաց՝ ԱՊՀ-ի երկրներում լիազոր ներկայացուցիչ Ստոք Թալբոտը հայտարարեց, թե իր այցի նպատակն է բարելավել հարաբերությունները երկու երկրների միջեւ եւ թե այդ կապակցությամբ «լավ» առաջարկներ ունի անելու Ուկրաինական կողմին: Այնուհանդերձ, ոչ նախագահ Կրավչուկը եւ ոչ էլ վարչապետ Կուչման չընդունեցին նրան, ըստ երեւույթին որպես փոխադարձություն անցյալ ամիս նախագահ Քլինթոնի կողմից Ուկրաինայի վարչապետին չընդունելու փաստին: Ինչպես հայտնի է, ԱՄՆ-Ուկրաինա հարաբերությունները բարվոք վիճակում չեն. Վաշինգտոնը ուկրաինական կողմից պահանջում է իրեն հայտարարել ոչ-միջուկային տերություն:

Հռոմի պապը ճնշադատում է մաֆիային

Սիցիլիա կատարած հովվական այցի ժամանակ, Ագրիգենտո քաղաքում Հովհաննես-Պողոս երկրորդ պապը ամենախիստ բառերով ճնշադատեց սիցիլիական մաֆիային: Քահանայապետը, հայտնապես բարկացած, հայտարարեց, թե Սիցիլիան ունի իրավունք «առանց ոճրագործությունների զոհերի, առանց սարսափի եւ սպառնալիքների ապրելու»:

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841
Տնօրեն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
Apple® Macintosh® համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
Azg armenian daily
Editor H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Թերթի ձեւավորումն եւ տարատեսակների հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱՔՅԱՆ
Ձեռագրերի չտպագրվածները չեն վերադարձվում: Տպագրված նյութերի հեղինակային իրավունքը պաշտպանվում է օրենքով: Հասցե՝ Երեւան 23 Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65 Դասակ 60140 Տիրաժ 36 000 Պատվեր 1506 Մտադրված է տպագրության՝ 10.5.1993

digitised by A.R.A.R.@